Ա Ր Ա Ր Ա Տ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՆԻ ԱԶԳԱՅԻՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԹՒԹՈՒՆ ԻԷ ՏԱՐԻ | ՀԱՄԱՔԱՂ ԵՕՔՆԵՔԱՁՔ | ՅՈՒԼԻՍ 1894 Թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

1. ՊԱԱԿԻ Ս. ԽՈՐՀՈՒՐԴԸ . .	201	Ա. ՏԷՐ-ՄԻՔԷԼԵԱՆ.
2. ԲԱԳՐԵՒԱՆԴ	207	Ս. Հայկունի.
3. ՄԱՆԿԱԿԱՆ ԳԱՐՏԷԶ . . .	212	Բժ. Լևոն Տիգրանեան.
4. ՇԱԲԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ	218	Սահակ Վարդ. Ամատունի.
5. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ	222	Սողոմոն Ս. Սողոմոնեան
6. ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՅ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԳԻՍ .	227	. . . . .
7. ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ	229	. . . . .
8. ՈՒՍՈՒՄ. ՅԱՆՁ. ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՑ	230	. . . . .
12 ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ . .		. . . . .

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՌՃԽԹ—1894.

ՀՐԱՄԱՆԵՆ

Տ· Տ· ՄԿՐՏՉԻ Ա·

ՎԻՃԱԿԱՒՈՐ ԵՒ ՄՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒԼԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ա Ր Ա Ր Ա Տ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԹՒԹՂ. ԻԷ. ՏԱՐԻ. | ՀԱՄԱՐ ԾՕՔՆԾԲՊԲՓ | ՅՈՒԼԻՍ 1894 Թ.

ԿՐՕՆԱԿԱՆ

ՊԱՍԿԻ Ս. ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԵՒ

ՀԻՄՈՒԹԻՒՆՆ

ԸՍՏ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ

(Շարունակութիւն). *

Ի պասկի խորհրդի հաստատութեան և ի նորա հիմնական հիմնարկութեանց հետ սերտ կապ ունի հաստատութեան սկզբունքը: Հաստատութիւնը պատմական արդիւնքների մէջ նշանաւոր տեղ է բռնում որ և դրաւ Աստուած այն օրից, երբ հաստատեց ամուսնութեան խորհուրդը: Նախամարդի ամուսնութեան իրագործութիւնից յետոյ ասուած է. «Ոչ ան այնորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին երկոքեան ի մարմին մի»: Ուրեմն պատկառողը պէտք է թողնէ, ազգային առնն և ուրիշ տնից առնէ իւր ամուսինը: Այդ ի հարկէ այն ժամանակից կատանալ իւր իրագործումն, երբ զանազան ընտանիքները հեռացղհեռ, սկսին տարբերուել իրարից. այդտեղ միայն սկզբունքն է արտայայտուած այն շրջանում երբ դեռ միմեանց ծնողներն և որդիները էին ընտանիք կազմելու: Այդ սկզբունքը պէտք է անշուշտ իւր կատարելութիւնն ստանար քրիստոնէութեան մէջ:

Հայաստանեայց Եկեղեցին ունի հաստատեան կանոն, իւր սկզբնաւորութեան օրերից սկսեալ և ահա երկար դարերի ընթացքում գործադրուում է: Այդ կանոնը մեծամեծ վէ-

* Տես. նախընթաց համարը:

1. Ծննդ. Բ, 24. Մատթ. ԺԹ, 5.

ձերի առարկայ է, վասն զի այժմ այլընդայլոյ են հասկանում ուստի հարկ է որոշել՝

Նախ թէ ինչ սկզբանց վրայ է հաստատուած ՀԱստուածեան կանոնը.

Բ. Թէ որո՞նք են նախնեաց կանոնները.

Գ. Թէ ի՞նչ կանոնով պէտք է ընթանանք։

Ա. ՀԱստուածեան արգելման հիմնական սկզբունքը քրիստոնէական սէրն է։ Սիրոյ պատուիրանն այնքան մեծ տեղ է բռնում Քրիստոսի վարդապետութեան մէջ, որ ոչ մի առաքելական եկեղեցի չի կարող թոյլատրել մի որ և իցէ կարգ դորա հակառակ սկզբունքի վրայ հաստատուած *։ Եկեղեցու ձգտումն է ընդարձակել ընկերական սիրոյ յարաբերութեան սահմանները և որքան կարելի է՝ առաւել մեծ շրջանում կապակցել հաւատացողները։

Եթէ եկեղեցին իւր բոլոր միջոցները գործադրէ միմիայն եղբայրների կամ ազգականների մէջ սէր հաստատելու, նա ընդարձակած չի լինիլ սիրոյ կապակցութեան սահմանները, վասն զի աղգականք արդէն ունին սիրոյ մէկ և գուցէ շատ հիմնաքարեր, որպէս արիւնակցութիւն, ընդհանուր պատիւ, յարաբերութեան յաճախումն և նմանք. և ուրեմն նա միայն եղած և խախտուածը կհաստատէ։ Նա պէտք է իւր միջոցներով սիրոյ նոր կապեր կռէ, որպէս զի օր ըստ օրէ առաւելանայ այն մարդկանց թիւն, որոնք սիրոյ մի շղթայով յերիւրուում են։

Հզօր և անխզելի են եկեղեցու դրած կապերը, վասն զի դոքա թէ հոգևոր են և թէ մարմնաւոր միանգամայն, ուստի և ոչ մի ուրիշ հաստատութեան կապեր չեն կարող այնպէս ամուր լինել և բարերար հետևանքներով առատ, որքան այդ աստուածային հաստատութիւնը։ Ի՞նչ կարող է բռնել եկեղեցու տեղն, երբ մի ազգի լեզուական, երկրային, արիւնակցական, բնաւորական և այլ կապերը պակուում են նաև ՀԱշմարիտ հաւատքի միութեամբ, տալով նորան ամրութեան համար ազգային բնորոշ արտայայտութիւն։ Եւ ի՞նչ կարող է փոխարինել նորան, երբ ամբողջ մարդկութեան միութեան համարևս տալիս է մէկ ամուր կապ «քրիստոնէութիւն» բառի արտայայտած սկզբունքով, որ բնաւորուելով իւրաքանչիւր ազգի կեանքի մէջ, միանգամայն և հանրամարդկային է։ ՀԱշմարիտ քրիստոնէութիւնն օղակ է կազմում իւրաքանչիւր ազգի միահուն կապակցութեան համար և այդ ազգերի բոլոր օղակները կապկպում է և դարձնում՝ ընդհանուր մարդկութիւնը պարունակող՝ մի շղթայ։ Մարդկութեան բաղկացուցիչ տարրն ազգն է. ազգինը—համայնքն, իսկ համայնքինն — ընտանիքը։ Քրիստոնէութիւնն այստեղից է սկսում իւր այդ աստուածային սիրոյ շղթան հիւսել։

Սիրոյ այդ հիւսուածքի հիմնական հանդոյցը պսակն է, որ արգելուելով մօտաւոր ազգականների մէջ, կայանում է հեռաւորների կապակցութեամբ և ընդլայնում է սիրոյ շրջանը։ Որչափ մօտաւոր ազգականաց մէջ տրրուի սիրոյ այդ հիմնաքարն, այնքան սղում է սէրը, կարճուում է և հզօր զարկ է տալիս եսականութեան զարգացման։

«Եթէ սիրիցէք զայնոսիկ, որ սիրենն զձեզ, ի՞նչ վարձք իցեն. ոչ ապաքէն և մաքսաւորք զնոյն գործեն» *. ասում է սիրոյ քարոզիչն ու սիրողութեան կատարեալ օրինակը։ Նա պատուիրում է՝ «Սիրեցէք զթշնամիս ձեր, օրհնեցէք զանիծիչս ձեր . . . .» իսկ թշնամութեան և ատելութեան վերացման քանի՛ քանի՛ նպաստաւոր են հանդիսանում ամուսնական կապերը։ Նոյնը չէր լինիլ, և ատելութեան աւելի զարկ կտար ամուսնութիւնն, եթէ միայն մօտաւոր ազգականների մէջ սահմանափակուէր. այն ժամանակ սէրը միայն

---

*. «Եթէ ջամբիցեմ զամենայն ինչս իմ ազքատաց, և մատնիցեմ զմարմինս իմ յայրումն, և սէր ոչ ունիցիմ՝ ոչ ինչ օգտիմ». «Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ և զհրեշտակաց, և սէր ոչ ունիցիմ եղէ ես իբրև զպղինձ, որ հնչէ, կամ իբրև զծընծղայս, որ ղօղանջին». Կորնթ. ԺԳ, 3։

*. Մատթ. Ե. 44։

ազգականների մէջ գոյութիւն կունենար, այս-
ինքն որոնց մէջ սահմանափակուում է ամուս-
նութեան ասպարէզը, մինչդեռ սիրոյ ամե-
նաբարձր աստիճանն իրական կեանքում՝ ա-
մուսնութեան մէջ է, սառնում իւր պահը:

Ուրեմն ոյնքան երկարացնենք այն կապն, որ
սիրոյ ամենագօրեղ աստիճանն է, պարունա-
կում իւր մէջ, այնքան ընդարձակած կլինինք
և սիրոյ շրջանն ու սահմանը: Մինչդեռ որ-
քան կարճենք, անյքան կսահմանափակենք և
ընդ նմին զարկ կտանք եսապաշտութեան:

Հռչակաւոր գերման իրաւաբան, արդարա-
դատութեան գաղտնի խորհրդական պրօֆէ-
սոր Ֆոն Շուլտէ՝ խօսելով պահի այն մեծ
նշանակութեան վրայ, որ սահմանուած է նա-
խանամութիւնից՝ ընտանիքին՝ մանաւանդ
ազգակցական և ընկերական սիրոյ վերայ ընդ-
արձակման համար, ասում է «Արդարև պէտք
է ոչ միայն մէկ ընտանիքի անդամներն, այլ
մարդկանց առաւել մեծ թիւ սերտ սիրոյ մէջ
ամիոփուի, որպէս զի սիրոյ կապերն ընդլայ-
նուին, և նոր անդամից միանալով վատ տար-
րերն արտաքսուին ու նոր, լաւ և կենսագօր
տարրեր ներս պատուաստուին: Իսկ եթէ ա-
մուսնութիւնները լինին միևնոյն ընտանիքի
անդամից մէջ, որոնք դեռ կատարեալապէս պի-
տակից են սիրոյ սերտ կապին, այն ժամանակ
ամէն մէկին իւր անձի մէջ շատ կապեր միա-
ցնելով, կարուում հեռանում է միացեալներից
և դրա բնական հետևանքն է եսապաշտու-
թիւնը: Այսպիսով աշխարհի բարոյական կա-
պակցութիւնը ներկայանում՝ մօտիկ ազգա-
կանաց ամուսնութեան արգելքն, որ թէև ան-
հաւասար ծաւալով, բոլոր՝ ոչ լիովին ապա-
կանուած՝ ազգերի մէջ շանաչուած էր, սա-
կայն քրիստոնէութեան մէջ պէտք էր ան-
հրաժեշտապէս մեծ նշանակութիւն ստա-
նար»:

Արդ՝ Աւետարանը քարոզում է որ Աստուած
սէր է, որ տեղ սէր կայ, այն տեղ է Աստուած.
պարզ է ուրեմն որ Հայաստանեայց Եկեղեցում
այն պահը կվայել է լիակատար օրհնութիւն,
որ ամիոփում է իւր մէջ աստուածային սիրոյ
ամենահիմնական սկզբունքը[1]: կամ ուրիշ
կերպ ասած՝ այն պահն է Աւետարանի ոգուն
համաձայն, որ ամենից շատ զարկ է տալիս
սիրոյ շրջանի ընդարձակման:

Ահա այս սկզբունքն է շեշտում Ա. Ս. Ն.
Շնորհալին՝ ասելով. «Եւ քանզի ամենայն
փոյթ Աստուծոյ և աստուածայնոցն յաղագս
սիրելոյ է զմիմիանս մարդկան, վասն այսորիկ
իրաւունս համարեցան, ոյք Հոգւովն օրինաւո-
րեցին, զօտարացեալսն ի միմեանց միանալ
սիրով ամուսնութեանն կապակցութեամբ, իսկ
զմերձաւորսն արեամբ բաւական վարկան հա-
մակզակցութեամբն միայն ունել զհաղորդու-
թիւն սիրոյ առ. իրեարս»:

«Եւ այս է առաջին պատճառ ոչ տալոյ Թոյլ
համացեղիցն ամուսնութեան. են և այլք յո-
լով՝ զորս իմաստնոցն Թողաք քննել»[2]:

Սիրոյ այդ սկզբունքից բղխում են արդէն և
այլ պարագայք այսպէս զոր օր. սրբազգացու-
թիւնը մօտիկ ազգականաց մէջ, ըստ որում ազ-
գականաց մօտաւոր և յաճախուղ յարաբերու-
թեամբն ապահովուած կլինի զանազան ազգա-
պղծութիւններից: Այսպէս և առողջ սերունդ
ունենալու համար՝ առաւել հիմք ունինք յու-
սալու ազգախառնութիւններից հեռու ամուս-
նութեանց վրայ, վասն զի բազմաթիւ բժշկական
օրինակներ ցոյց են տալիս, որ ազգախառնու-
թեան սերունդը Թոյլ և տկար է լինում մարմ-
նապէս և հոգեպէս. այլ և թերակատար ծը-
նունդներ յաճախ են պատահում այն է՝ խուլ,
ձեռնատ և ն. որպէս Անգլիայում, Ֆրանսիա-
յում: Մինչև անդամ մարդկանց անձնական
շահերը պահանջում են աւելի և աւելի շա-
տացնել նորանոր բարեկամաց թիւն և ոչ թէ
ունեցածների չղթայով վերստին կապկպ-
ուիլ:

Բայց Թողնելով վերջին կէտերը, դիտենք
սրբազգացութիւնը, վասն զի այդ մեծ կախումն

---

1. Սէր «ոչ յանդգնի, ոչ խնդրէ զիւր, ոչ գրգռի, ոչ խորհի չչար, ոչ խնդայ ընդ անիրաւութիւն, այլ խնդայ ընդ ստուգութիւն». 1. Կորնթ. ԺԳ. 5.
2. Ընդհանր. էջ. 85.

ունի սիրոյ սկզբունքից։ Ազգականութեան կապը, Աստուծոյ շնորհումն սէրն է. այդ սէրն եղբայրական սուրբ սէր է. թողնել այդ և ամուսնական կապակցութեամբ սիրել՝ նշանակում է արհամարհել այդ սուրբ սէրն և փոխարինել խառնակութեան սիրով, քանի որ առաջինն առաւել բարձր առաքինութիւն է քան երկրորդը։

Ահա տեսնում ենք որ մինչև անգամ հին ուխտում սրբութիւնն առանձնապէս պահանջուում է ազգականներից։ Այնտեղ Աստուած հրամայում է հեռու կենալ հեթանոսական պղծութիւններից և իւր սուրբ անունը չպղծել ազգախառնութիւններով։ Նա պատուիրում է. «ըստ ամենայն գնացից երկրին եգիպտացւոց՝ յորում պանդխտեցարուք՝ մի առնիցէք, և ըստ գնացից երկրին քանանացւոց՝ յոր ես առաջի զձեզ՝ մի առնիցէք, և ըստ օրինաց նոցա մի գնայցէք»[1]։ Եւ թուելով այն ապօրինութիւնք, որոնք օտարներից մըտնում էին Հրէից մէջ, ասում է. «Եւ մի՛ պղծիցիք այնու ամենայնիւ. զի այնու ամենայնիւ պղծեցան ազգքն, զոր ես վերժեցից յերեսաց ձերոց. և եղև գարշելի երկիրն . . . .[2]։ Այդ ազգապղծողներին մինչև անգամ քարկոծելու և այրելու հրաման է տրուում[3]։

Մովսիսական օրէնքը մի առ մի արգելում է այն ազգախառնութիւնք, որոնք մտել էին հեթանոսական սովորութիւններից Հրէից մէջ[4]։ Այնտեղ միանգամ ընդ միշտ արգելուում է, ամուսնութիւնն ազգականաց մէջ, բայց մինչև որ աստիճանը՝ յայտնի չէ։ Յիշուում են խորթ մայր, հօրաքոյր, մօրաքոյր. հօրեղբօր կին, քոյր և խորթ քոյր, եղբօր արձակած կինը, որդու կինը, որդու աղջիկ—նոյն և հնոջ կողմից, մայր և աղջիկ միաժամանակ և երկու քոյրեր միանգամայն։

Ըստ այս յիշատակութիւնը լիակատար չէ՝ երևում է նոյն իսկ նորանից, որ հօր և իւր աղջկայ ամուսնութիւն արգելքը չէ յիշուած, թէև գիտենք որ չէր կարող ընդունուիլ[1]։ Միւս կողմից այդ օրէնքին հակառակ դէպքեր էլ լինում էին, որպէս եղբօր և քրոջ[2], կամ երկու եղբայրների որդուց մէջ[3]։ Ուրեմն Մովսիսական օրէնքի մէջ ոչ թէ մէկ լիակատար օրէնք է տրուում այլ միայն սկզբունքը՝ թէ ազգականների մէջ ամուսնութիւն չպէտք է լինի և այդ միայն հեթանոսական նորամուտ սովորութեանց, որոնք լրացրին այդ օրէնքի պակասութիւնները, զոր օր. վերացնելով՝ եղբօր մահից յետոյ նուին (հարսին) առնելն, որ ըստ Մովսիսական օրինաց ոչ միայն թոյլատրուած էր, այլև հրամայուած էր[4]։

Նոյն սկզբունքը պահպանուեց և քրիստոնէութեան սկզբի օրերում։ Պօղոս առաքեալն ուղղակի պոռնկութիւն է անուանում ազգախառնութիւնը։ Մինչև անգամ համեմատութեամբ է դատապարտում ասելով՝ «այնպիսի պոռնկութիւն՝ որ ոչ և ի հեթանոս. որպէս թէ զկին հօր իւրոյ ունել»։ Այդ այն աստիճան դատապարտելի է համարում որ մինչև անգամ որոշում է, «Պատնէշ զայնպիսին սատանայի ի սատակումն մարմնոյ, զի ոգին ապրեսցի յաւուրն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»[5]։

Ուրեմն քրիստոնէութեան մէջ ևս ազգականների ամուսնութիւնն արգելուած է սկզբունքով[6]։ Այն որ հին ուխտի մէջ պղծութիւն է, համարուում Աստուծոյ սուրբ անուան համար և արգելուում պէտք է անպատճառ իւր կատարեալ և որոշ արգելքին հանդիպելը նոր ուխտի մէջ։ Պօղոս առաքեալը յիշում է, միայն իւր օրով պատահած դէպքը, սակայն երբ քրիստոնէական եկեղեցիները հետզհետէ կազմակերպուեցան, այնուհետև արդէն առաքելական աւանդութեան որոշ արտայայտութիւն պէտք է տային։

---

1. Ղևտ. ԺԸ. 3։ 2. Անդ. 24, տես. և Ի, 23։ Բ. Օր. ԻԷ. 20, 22։ Եզեկ. ԻԲ. 10։ 3. Ղևտ. Ի, 11 ևն։ 4. Ղևտ. ԺԸ, 7—18, Ի, 11 ևն. 14. 17. 19—21։ և. Օր ԻԷ, 20. 22 ևն։

1. Տես. Ծննդ ԺԹ, 31 ևն։

2. Բ. Թագս ԺԳ, 13։ 3. Ա. Մնաց. ԻԳ, 22։ 4. Բ. Օր. Իե, 5—10. Մատթ. ԻԲ, 23։ 5. Ա. Կոր. Ե. 1—5։ 6. Տես և Մատթ. ԺԹ, 4. Մարկ. Զ, 17։

Այժմ տեսանենք թէ ի՞նչ կանոնով էր վարուում Հայաստանեայց առաքելական Եկեղեցին։

Բ. Հայաստանեայց Եկեղեցին՝ ինչպէս և քրիստոնէական միւս եկեղեցիք, վարուում էր իւր ընթացքն առաքելական աւանդութեանց համաձայն։ Սրեղ յայտնի է, որ առաքեալք հիմնելով եկեղեցիներ, երբ որ պէտք էր լինում՝ պրում էին թղթեր և պատուէրներ տալիս, սակայն յաճախ բերանացի էին աւանդում ինչ որ կարևոր էր։ Պարզ բան է, որ նոցա յաջորդներն ևս այնքան ժամանակ կշարունակէին բերանացի աւանդութեամբ կառավարուել, մինչև որ եկեղեցին ընդարձակուէր և պէտք զգացուէր այդ աւանդութեան հիմնական կէտերի արձանագրութեան։

Հայաստանեայց Եկեղեցին կենսակից լինելով Ասորոց Եկեղեցուն, ունէր դրա հետ իւր ընդհանուր աւանդութիւնք, որոնք և յետոյ դրերի գիւտի ժամանակ թարգմանուեցան Հայերէնի կամ անփոփոխապէս և կամ ըստ սեփական աւանդութեանց ձևակերպուելով և Հայոց Եկեղեցուն օգտակար դառնալով*։

Այն հիմնական աւանդութիւնք, որոնք Ասորոց և Հայոց ս. Հայրերի միջոցով խմբագրուեցան և Հայաստ. Եկեղեցու հիմնաքար դարձան, կոչուում են «Առաքելական կանոններ»։ Դոցա խմբագրողներ են առաքելական ս. Հայրերն, որպէս յիշուում է. «Եւ արդ այսուհետև ամենայն ինչ որ խօսեցաւ ի Տեառնէ ի ձեռն առաքելոց, և առաքեալքն աւանդեցին աշակերտաց իւրեանց, և եղև հաւատարիմ և ընդունելի յամենայն կողմանս . . . . »։ Ըստ որում և դոցանից իւրաքանչիւր կանոն սկսուում է «Կարդեցին առաքեալքն և եղին հաստատութեամբ» խօսքերով։

Ուրեմն նոյն իսկ այդ կանոնները վկայում են թէ դոքա առաքելական աւանդութիւններն են, որոնք ս. Հայրերի համալ մնացել են հաստատուն սկզբունքներ եկեղեցական կարգ ու կանոնների մէջ։

Հայաստանեայց Եկեղեցին ընթացել է սկզբից այդ առաքելական աւանդութեամբ, որպէս և Շահապիվանի ժողովն ասում է իւր կանոնների մէջ, «առաքելական և նիկիական կանոնքն հաստատուն կացցեն»։ ըստ որում և «որ ինչ պիտոյ է ի լրութիւն ի նոյն կանոնս և մանաւանդ ի մէջ տանս Թորգոմայ և կողմանց արևելեացս՝ ապա կարգեցին . . . »։

Այդ կանոնք Հայոց Եկեղեցու առաքելական աւանդութեան նախնական կանոններն էին, ուսաի և Շահապիվանի ժողովը հրամայելով որ դոքա հաստատուն պահուին, իւր նոր կանոններով ևս ցոյց է տալիս թէ որքան ընդհանրացած են եղել դոքա. ժողովը մինչև անգամ յաճախ դոցա ոճերն ու դարձուածքներն է յիրարկում՝ յարակից Ս. Գրքի դարձուածքներին և ասացուածքներին։

Արդ, դոյն աւանդական կանոնաց մէջ գրանում ենք մեր Եկեղեցու հիմնական կանոնը Հաւատքեան մասին, որ անշուշտ Նիկիոյ Ածի օրով ակնարկուած և Աշիշատի ժողովով կրկնուած կանոնն է եղել. «վինիցին ամուսնութիւն օրինաւորք . . . ։ փախչել աւելի ի մերձաւոր և յազգին տհմակից խառնակութեան ամուսնութենէն, և մանաւանդ ի մերձաւորական նուռց, և որ գամ ի այսմ նման լեալ էր ինչ»[1]։

Առաքելական աւանդութեան ԼԴ. կանոնում ասուած է. «Կարդեցին առաքեալքն և եղին հաստատութեամբ, եթէ ի սկզբանէ զուզեաց ամուսնութեամբ զմարդն և օգնական արար միմեանց և օրհնեաց զնոսա. նոյնպէս սահմանեալ և հաստատեալ հրաման առաքելական՝ սրբութեամբ զուգել յամուսնութիւն

*. Հայաստանեայց Եկեղեցին երբէք հեղինակութիւն չէ դարձրել օտար կանոններն իւր մէջ, առանց ըստ սեփական առաքելական աւանդութեանց և ըստ իւր կազմակերպութեան ձևակերպելու։ Վասնորոյ և ուրիշ կանոններ չէր ընդունում առանց իւր բարձրագոյն կանոնադրութեամբ հաստատելու։

1. Փաւստ. Բիւզ. IV, Դ։ Տես և Արրահամ կաթուղիկոսի Թուղթն առ Մ. Գոշի. «Հարկեցաք գրել—պինդ ունել զպատուէր Հոգւոյն սրբոյ ի ձեռն օրինաց և մարգարէից, զորս առաքելական կանոնագրութեամբ հաստատեցին սուրբ և ուղղափառ վարդապետք»։

և օրինօք՝ ի ձեռն սրբոյ քահանայութեան և օրհնութեամբ զուգեսցին»։ Ապա բերելով Մոսսիսական հրամանը, շեշտում է.

«Նոյնպէս սահմանեալ առաքելական կանովնաց՝ մարդ ոք մարդ առ ամենայն ընտանութիւն մարմնոյ իւրոյ մի՛ մերձեսցի, կամ շնութեամբ կամ ամուսնութեամբ մինչև ի չորրորդ զարմն՝ չունի իշխանութիւն առնել»[1]։

Հայաստանեայց Եկեղեցու սեփական այս կանոնը հաստատուն սկզբունք է այդ խնդրում, այնպէս որ երկրորդ ծնունդում ամուսնացողներն և նոցա զաւակները զրկուում են քահանայական արժանիքից։ «Իսկ զպոռնկորդիս և որ յերկրորդացն են՝ ասում է Ս. Սահակ, նոցին հաւասար մինչև յերրորդ ծնունդ, ըստ առաջին կանոնացն հեռի կացցեն ի կարգէն և ի շնորհացն, զի պարկեշտ և սուրբ անեղկևան եղիցի ուխտ պաշտօնէից Աստուծոյ»։ Այս կանոնը ցոյց է տալիս թէ ինչ մեծ նշանակութիւն ունի այդ սկզբունքը Եկեղեցու համար։ Առաքելական կանոնը կրկնում է վերստին Շահապիվանի ս. ժողովում։ Այնտեղ կարդում ենք. «Որ զազգական կին առնէ՝ այս պղծութիւն և գարշանք յայտնի լիցի, և անուանեսցի մի՛ ի միջի ձերում, զի մի ոք ընդ աղտախառն յարդանդի մարմնոյ իւրոյ խառնակեսցի ըստ սովորութեան հեթանոսաց և անաստուած ամբարիշտ ազգացն, զոր հրաման առեալ մեծ օրէնուսոյց մարդարէին Մովսիսի ի կենարարէն թէ՝ պատուիրեա որդւոցըն Իսրայէլի, մարդ ոք մարդ մի՛ մերձեսցի առ ամենայն ընտանութիւն մարմնոյ իւրոյ՝ յայտնել զառականս նոցա, և յանէծսն գրէր Մովսէս թէ անիծեալ որ ննջիցէ ընդ ազգականի արեան իւրոյ։

Արդ մի՛ ոք որ զաստուածպաշտութիւն և զքրիստոնէութիւն զգեցեալ և զաէրունական մկրտութիւն զկնիք և զդրոշմ զարքունական, զքոյր կամ զքեռորդի կամ զեղբօրորդի կամ զհօրաքոյր, կամ զայլ ոք յայդի անդ իւրում մինչև ի չորրորդ ծնունդն կին զոք մի՛ իշխեսցէ առնել, զի մի՛ պատառումն եղիցի սուրբ հաւատոյն, քանզի բարկութիւն անձին իւրում գանձէ այնպիսին։ Որդի անօրինի թերակատար եղիցի և զաւակ անօրէն անկողնոց մի՛ բողբոջեսցի։ զի թէ զկին եղբօր իւրոյ՝ մեծի մարգարէին և կարապետի Յովհաննու գլուխն կտրեցաւ, ապա զինչ և աս աղետս չըհամարեսցուք, որ զազգական իւր կին առնէ, զոր ոչ հրամայեն օրէնքն քրիստոսականք և սուրբ առաքեալքն՝ աշակերտքն Քրիստոսի։

Արդ եթէ ոք ընդդիմացեալ օրինացս և հաստատեալ կանոնիս, և ամբարշտեալ ի հեթանոսութիւն և ի հրէութիւն կոծանեսցի, ընդ նոսին եղիցի և բաժին նորա և ի Սրբոյ Եկեղեցւոյ օտարացեալ եղիցի.....»։

Տեսնում ենք որ Շահապիվանի ժողովը հիմնուում է առաքելոց հրամանի վրայ և բացի ի բաց արգելում է ամուսնութիւնն «մինչև ի չորրորդ ծնունդն»», որին հակառակ ընթացողներին սոսկալի պատիժներ է նշանակում և նզովում։ Անշուշտ այդ «մինչև ի չորրորդ ծնունդն» խօսքը Հայոց համար բոլորովին հասկանալի արտայայտութիւն է եղել և բացատրութեան կարօտ չէր։

Նոյն հիմնական կանոնը յիշատակուում է և Սերսէս Բ. Աշտարակեցու պատժական կանոնաց մէջ, որ տեղ ասուած է.

«Վասն զազգական կին առնելոյ զերրորդն[2]

---

1. «Ի ձեռն Կղեմայ», ՓԷ. կանոնը թէ «Որոյ երկուս քոյս առեալ է և կամ քեռորդի, ոչ կարէ ժառանգաւոր լինել». ընդհանուր արժէք չունի, այլ պատահած դէպքերի դէմ է.

2. Կանոնագրքերից շատերի մէջ դրուած է «զերդն մի իշխեսցէ», սակայն այդ հին սխալ պէտք է համարել. վասն զի նախ որ դորան հետևում է «և զչորրորդն» ամ. ողջ բառով գրուած և ուրեմն

մի՝ իշխեսցէ և զչորրորդն ապաշխարեսցէ և երրորդքն մեհենեսցին և ապաշխարեսցեն»։

Բայց երբ որ այս կանոնը ժամանակի ընթացքում աչքաթող արին, Սիոն կաթուղիկոսը ստիպուեց վերստին նորոգել այդ հրամանն, ըստ որում և Պարտաւի ժողովի (768?) որոշմանց մէջ կանոնադրում է.

«Յառաջն առաջին սուրբ հարքն յիւրեանց ժամանակս արգելին զազատս և զանազատս յարեան մերձաւորութենէ. այժմ առ մեօք լուծեալ տեսանեմք՝ մանաւանդ ազատաց՝ զկանոնն սո. Հարցն, զի անխտիր խառնին ընդ իւրեանց մերձաւորսն անկարդ ամուսնութեամբ զուգեալ. յայսմհետէ չորրորդ զարմ մի՝ իշխեսցեն ամուսնութեամբ զուգիլ, ապա թէ ոչ՝ նզովեսցին ի մէնջ և ինքեանք տացեն պատասխանի Աստուծոյ ի մեծութեան նորա դատաստանի»։

Այսպիսով Հայաստանեայց Եկեղեցու հիմնական կանոնը հրամայուում է հինգ դար շարունակ և յետոյ։ Մեզ մնում է այժմ պարզել թէ ինչ է այդ «մինչև ի չորրորդ ծնունդ» խօսքերի իմաստը։

(Կը շարունակուի)։

Ա. ՏԻՐ ՄԻՔԵԼԵԱՆ։

ՊԱՏՄԱԿԱՆ

ԲՐԳԲԻՒՆՔ

Ա

Յրարատնահանդի հարաւային գաւառաց մին է Բագրեւանդ, որ բռնած է Արածանին և կամ Մուրադը կազմող երկու ճիւղերու, Շեւհան ու Մուրատ[2] գետոց հովտի ամբողջ տարածութիւնը և կամ այսօր Տիատին Շահապիվան), Գարաքիլիսայ և Ալաշկերտ Վաղարշակերտ) կոչուած վայրերն, որք ի հիւսիսոյ շրջապատուած են Ջրաբաշխ լեռանց և ի հարաւոյ Ղլիճ-կէտուկ (Թրի-կիրճ) և Ավատաղ (Ծաղկանց) լեռանց շղթայով. նաև Սուկաւէտ (Ֆօսատաղ) և Նպատ լերանց միջավայրը՝ որոց առաջինը կը գտնուի Բագրեւանդայ արեւմտեան կողմն, երկրորդն արեւելեան[3]։

Բնական դիրքով երկու գեղեցիկ դաշտաձեւութիւններու բաժանուած է Բագրեւանդ, արեւելեան և արեւմտեան, զորս կը բաժանէն Սինակ

1. Ըստ պատմութեան Արածանին կը կարծուի Շեւհանի և Մուրատի միացմամբ ի հարաւ ուղղուած Մուրատ (Եփրատ) գետն, որ կսկսի Բագրեւանդայ արեւմտեան դաշտի կեդրոնը գտնուած Գարաքիլիսայ գիւղաքաղաքէն 1/2 ժամ ի հարաւ, կերկարի ի Մանազկերտ, յԱպահունիս և ի Մուշ ալն., ոմանք կասեն թէ Արածանին առանձին ջուր է, որ Բիւրակնեան լեռնէն կիջնայ, կանցնի Խնուսի և Ապահունեաց միջէն, Եփրատի կը խառնուի. Խնուսայ մէջ Բինկօլի ջուր կասուի, իսկ Ապահունեաց մէջ Չեռնակայ ջուր։

2. Մուրատ այն ջուրն է, որ Ծաղկանց լեռներէն կիջնայ. Շեւհանի հետ խառնուելով մեծ Մուրատը կամ Եփրատը կը կազմէ։

3. Այս լեռներն Բագրեւանդայ սահմաններէն 1—2 ժամ հեռու են։

առաջինն էլ բաւական կլինի և ոչ դասական թուով երկրորդ՝ եթէ հինգերորդը արգելուած լինի՝ միմիայն չորրորդը չի կարող ընդ ապաշխարանօք լինել, երրորդ՝ չորրորդի և երրորդի կանոնազանցութեան դէմ կարգադրութիւն է անում, ինչպէս կարող էր հինգերորդի համար ոչինչ չասել՝ թէ արգելուած էր, Սիալը յառաջացել է «ե.» տառի առանձին կարդալուց և ըստ երևոյթին շատ հին է, Իսկ եթէ ուղիղ համարենք «չհինգերորդն», այն ժամանակ այդ պէտք է բացատրուի թէ հինգերորդը դժուարութեամբ թոյլատրել, որպէս զի կանոնազանցութիւնը գիւրաւ չկատարուի։

Սակայն ես հետևում եմ տրամաբանական իմաստին և մանաւանդ մի մագաղաթեայ հին օրինակի ընթերցուածքին. այս օրինակը գեղեցիկ ընթերցուածքներ շատ ունի. Ոմանք էլ ունին «ցհինգերորդն մի իշխեսցէ»՝ այսինքն որ հինգերորդը կարող են պահպանել, այս ևս կարելի է ուղիղ համարել։

և ծաղկանց լեռներէ Մուրատի աջ և ձախ ափը իջած, ընդհատած ձիւղերն։

Արևելեան դաշտագետինը, որ պատմութեան մէջ Ձիրաւ ասուած է, կը տարածուի Նպատայ հիւսիսն և արևելեան հիւսիսն նաև յարևելս, մինչև Տիատինայ արևելեան կողմն գտնուած Իփեկայ կէտուն։

Այս դաշտագետնոյն միջավայրէն կը հոսի Մուրատ յարևմուտս կոյս, այստեղ է հրաչակաւոր Ս. Յովհաննու վանք (Իւչքիլիսայ), որ Նպատ լերան հիւսիսային ոտքն Եփրատի ձախ ափին վերայ կառուցուած է. այս վանքէն կը տեսնուի Նպատայ գագաթը՝ Մեծն Նեբսեխի աղօթավայրը կառուցուած մատուռն[1]. և. և.։ Այս դաշտին մէջ է Տիատին գիւղաքաղաքն, որոյ հարաւն է Տիատինայ հարիւրաւոր ջերմուկներն, ուր Եփրատի վերայ հաստատուած է կրային ջրէ կազմուած կամուրջն։

Երկրորդ՝ մեծ դաշտագետինն արևմտեանն է, որ տարածուած է Սուկաւէտի արևելեան հարաւը մինչև Ձիրօ հայ գիւղն։

Բագրեւանդայ արևմտեան մասն որ Ալաշկերտ ևս կը յորջորջուի. բռնած է մեծաւ մասամբ Շեռեան գետոյն ձախ հովիտը, ուր կան մերձ Սուկաւէտի Թօփրաք-գալէ (Վաղարշակերտ) և մերձ Արածանւոյ Գարաքիլիսայ գիւղաքաղաքներն, որոց առաջինը յարևելս Սուկաւէտի Շահկօլ լերանց հարաւային ստորոտը շինուած է, ուր դեռ կերևին Վաղարշի շինած բերդի բեկորներն, իսկ Գարաքիլիսան, որ Վաղարշակերտից 4 ժամ արևելեան հարաւ, գրեթէ դաշտի կեդրոնի նաև Իրանայ ճանապարհի վերան, Պաշլի և Քօր գետակաց ի մուրատ խառնուրդի միջավայրն զեղեցիկ դիրք մի բռնած է, երեք կողմից մեծ մեծ ջրերով պատած և տակաւ առ տակաւ քաղաք դառնալու վերայ լինելուն համար։

Երկու դաշտագետիններն, որպէս ասացինք, կը բաժանուին այն վայրը, ուր կայ Դաշլի-չայ պարսկաբնակ մեծ գիւղն, որ է Խաձըոյն վերայ և Մուրատի աջ եզրը։

Բագրեւանդայ արևմտեան բաժանման դաշտային մասն Ջեռըկան գիւղէն դէպի յարևելս մինչև Դաշլի-չայ 11—12 ժամու ճանապարհ է ձիով, իսկ լայնութիւնը 2—3 ժամ։

Այս երկու դաշտագետիններէ արևելեանն է բուն Բագրեւանդայ դաշտագետինն, որպէս ասացի, ուր է Ձիրաւայ պատմական դաշտը, որ կըսկսի Դաշլի-չայից, կերկարի յարևելս 6—7 ժամ մինչև Իփեկայ[1] կրճի մօտերն։

Ամբողջ Բագրեւանդ միանգամին առնելով ձուաձև գիրք ունի, երկարութիւնը ուղղուած է ընդ մէջ արևելից և յարևելեան հարաւոյ, 20—25 ժամ երկարութիւն, որ մի ակընթարթով Ալաշկերտի արևմտեան բարձունքը դառնուած Խալեազ[2] լեռնագաշտից կարող ես տեսնել. իսկ բաժանումներն ևս նոյն ուղղութեամբ ձգուած են։

ԼԵՌՆԱՇՂԹԱՑՔ

Ջրաբաշխ լեռներու շղթայն զԲագրեւանդ հիւսիսից կորաձև պատած՝ նաև Ղլիճկետուկ և Ալաստազ ի հարաւոյ նոյնպէս պատած լինելուն՝ դաշտն ձուաձև կերպարանք առած է, ասացի, որ ձուի հաստ կողմն կարող ենք համարել դաշտի արևմտեանն և սուրն արևելեանը, սակայն երկու գետերու միացմամբ կազմուած Արածանին արևմտեան դաշտի հա-

1. Ա յս մատուռի վայրը կանգնած՝ բազկատարած յարևլս դարձած, Նպատայ ստորոտը, Ձիրաւայ դաշտի մէջ կոուող Հայկական բանակի յաջողութեան համար աղօթած է Մեծն Նեբսեխ, այս մատուռէն հարաւ, քանի քայլ խոնարհ կայ Սրբոյն Ճգնարանը, ուր ևս ուխտ կը գնան։

1. Ծաղկանց լեռներու մի շղթայն է, որ խոնարհելով Բագրեւանդայ յարևելից ի հիւսիս. կը խառնուի հիւսիսային շղթային, որ դէպի աջ (յարևելս) Մասիս իսկ դէպի ձախ (յարևմուտս) ի Սինակ և Ջրաբաշխ կերկարի։

2. Խալեազ Սուկաւէտից յարևմուտս բարձր գիրք ունի, քսանի մօտ քրդաբնակ գիւղերով լեռնագաշտ մէ, ուստի յարևելս աչքիդ առջև կը պարզուի ամբողջ Բագրեւանդ շրջապատող լեռներն ու լեռնաշղթայներն, որոց միջավայրն, ի խոնարհ, երկու դաշտագետիններն, իսկ երբ յարևմուտս դառնաս, Բասեան՝ որ հարաւից պատած են Բիւրակնեան լերինք, հիւսիսից Խորոսանայ լեռն. և առջևդ Բասեանի դաշտն, որոյ վերայից դիմացդ կը պարզուին Կարնոյ բարձրաբերձ լերինք։

բաւային լեռնաշղթային ցյատակ ձեղքելով ուղղուած է ի Մանաղկերտ, բաժանելով յայլ Ղլիճ կէտուկի և Անգափի լեռներն, իսկ ի ձախ Ծաղկանց լեռներն, որով Բագրեւանդ ծով լինելէ դադրած է։

Բագրեւանդայ $^{1}/_{10}$-ը հարաւ. դաշտային լինելով՝ ծնացածն լեռներէն, լեռնահովիտներէ կը կազմուի, որք և իւրեանց դադաթան վերայ տեղ տեղ ունին մեծամեծ տարածութեամբ լեռնադաշտեր, որոց իւրաքանչիւրին մէջ վեռեղուած կան 10—20—30 քրդաբնակ գիւղեր, որք գիւղախմբապետութիւն (ղըլավայ) կը կազմեն, որք միայն արեւմտեան դաշտի շուրջն 25-ի չափ կան, որոց վերայ մանրամասն խօսելու եմ ի տարին։

Հիւսիսային լեռնաշղթայն անընդհատ պատած է ամբողջ Բագրեւանդայ հիւսիսն, ուստի շարունակութեամբ կը հասնի Մասիս։

Մենք այժմ կը գտնուինք Բագրեւանդայ արեւմտեան կողմ եղած Իսալեազի արեւմտեան բարձանց վերայ. Եայլիդաշ (սեպագրութիւն) ժայռից մի ժամ յարեւելս, մեր երեսն ուղղած լինինք յարեւելս, մեր աջ ու ձախ կողմերէ կերկարին յարեւելս լեռնաշղթաներ, որք նախ Իսալեազ լեռնադաշտի շուրջն (հիւսիս և հարաւ) կը պատեն, ապա դաշտի։

Մեղնից $^{3}/_{4}$ ժամ հեռի, մեր ձախ կողմը դահաւ գիւղի անմիջապես հիւսիսային բարձունքը կայ Դուամ լեռն, նոյն անուամբ 3—3 $^{1}/_{2}$ ժամ կերկարի ցԿօռիս և Սուկաւէսի հիւսիսային բարձունքից 3$^{1}/_{2}$—4 ի Շահկօլ[1] լեռ, որոյ գագաթից մի առատ աղբիւր կը բղխի, լճանալով կը հոսի։ Ասոի շղթայն կերկարի Մանակներ, Զիւհդքու (ծաղկանոց), Կօռէ, Բօզ-թէփէ, Աշան օղլի, Աղբուլաղ (սպիտակ աղբիւր), Զաւիէ, Մերկեզեր (գեղին մարգեր), Ախտայ, Թանտուրակ և Սինակ, որք իրարմէ 1—2 ժամ հեռաւորութեան վերայ այս անուամբ բարձրացած են։ Ջրաբաշխի շղթային վերայ իւրեանց գլուխներն ցցած և սոքա արեւմտեան դաշտի հիւսիսային կողմն կիսաբոլորակ կը պատեն։

Մինչև Աշան օղլի շղթայն յարեւելս ուղղուած կը. յորմէ յետոյ մինչև Սինակ տարաւ առ տարաւ արեւելեան հարաւ դարձած, այնպէս որ Սինակ ընկած է արեւմտեան դաշտի (Ալաշկերտի) ուղղակի արեւելեան կողմն։

Սինակ և Գանտիլի գետան (ոսկեա լեռ) լեռան շարունակութիւնը կերկարի, Ղզլ Ջիւրկէթ. Կօլկնի[1]), դէպի յարեւելս ձգուած են. Ջերաւայ դաշտի հիւսիսն բռնած։

Սոքա ձախ կողմից երկարացած շղթայի վերան գտնուած լեռներն, որք իրար շղթայուած կին և որք Բագրեւանդայ հիւսիսն պատած. ամբողջապէս մեր տեսութեան ներքև են. այժմ դառնանք մեր աջ կողմի լեռնաշղթային, որ Բագրեւանդայ հարաւէն պիտի անցնի։

Մեր աջ կողմն՝ Շեռեան կամ Խալեազ գետոյն նաև աջ կողմն կը բարձրանայ մի հսկայ լեռ Ակարդամըր (Թաթարական մարգեր) անուամբ, որ գագաթը ունի ընդարձակ տափարակ ուր կը տեսեղուին 1000-ից աւելի վրանաբնակ քրդեր ամրան մէջ, այս լեռն Խլբաղինեան լերան յարեւելս արձակած շղթայի վերայ բարձրացած է. ասոի և ուղղակի յարեւելս երկարելով մինչև Կէլին (Հարս) և Արդախ (նիզակ) կը պատէ Խալեազի, ըստ Հայր Ալիշանի Տուարածատափի[2]) հարաւեն, ուստի շարունակելով կանցնի Ալաշկերտի դաշտի հարաւէն, դէպի Բրձո Ղլիճկեատուկ և

1. Ղղիճայի հարաւային երեսին վերայ է Շահկօլ լեռն, ուստի առատ ջուր կը բղխի, ասոի նախնիք ագուգայներով ջուր տարած են Վաղարշակերտ, որ կը գտնուի 2—2 $^{1}/_{2}$ ժամ արեւելեան հարաւային ստորոտը։

1. Այս շղթայն բուն Բագրեւանդայ, այսինքն ա. րեւելեան դաշտին պատկանելուն՝ առանձին հատորով պիտի խօսիմ սորա վերայ. որոյ համար մանրամասն չեմ ներկայացներ այս տեղ։

2. Ըստ իմ կարծեաց Տուարածատափ այժմեան Անգափ գաւառակն է, որ Ալաշկերտի վիճակի հարաւն և Մանազկերտի հիւսիսն կընկնի, այս կարևոր գաւառակին վերայ ցարդ ո՛և է գրուած տեղեակութիւն չէ. Տեղագրականիս յաւելուածին մէջ հնէ ոչ մանրամասն՝ գոնէ հարևանցի ակնարկ մի պիտի ձգեմ հանդերձ մի քանի հետաքրքրական աւանդութիւններով. Անգափ 140 քուրդ գիւղ ունի։

կեառէ (խուլ) ձգուելով կընդհատի Արածանւոյ սկսած վայրը (աջ ափին վերայ)։

Հանդէպ կեառէ լերան՝ Արածանւոյ ձախ ափն ի վեր կը բարձրանան Ծաղկանց հսկայական, ընդարձակ և բարձր լերինք [1]) որք ի հարաւոյ կը պատեն արևմտեան դաշտի կէսն, բուն բագրեւանդը և Գոգովիդը. կը ձգուին մինչև Մակու և Խոյ։

Այս շղթայն ևս կը պարապէ զբագրեւանդ հարաւային կողմէն։ Մէարգամիրի շղթայն կը բաժանէ Խալեազը Խնուսոյ, Բրճոյի, և Պլիճկետուկի շղթայն՝ Ալաշկերտի դաշտն Ընդափից։ Նաև Ծաղկանց լեռներն կը բաժանեն Մանազկերտն Խամուրիյ [2] և Գարաքիլիսայից, Արճէշն Իշքիլիսայից, Վանն Տիատինից։

ՆՇԱՆԱՒՈՐ ԼԵՐԻՆԴ.

Որչափ որ երկու դաշտագետիններու շուրջն շղթայք լեռնանման խոյացած են դաշտի վերան, սակայն տեղ տեղ կը տեսնուին շղթայի ճայրէն վեր բարձրացած գագաթներ, մեծ ու փոքր սարեր, որք անուն ունին և սար կասուին, տեղ տեղ նաև շղթայն քիչ կամ շատ խոնարհած է. ուստի մարդոց երթեւեկութիւնը կը լինի, սա ևս կէտուկ (կիրճ) անուն կը կրէ։

Ծաղկանց լեռներն, որք Ալաշկերտի դաշտի արևելեան հարաւ կընկնին, նաև Մուրատի սկսած վայրէն ցկառնուրդ Շեռեանայ եղած ընթացքին հարաւն կամ ձախ ափն ի վեր բարձրացած են։

Նպատ. — Ծաղկանց լեռներու ի հիւսիս խոնարհած թևի և Մուրատի ձախ ափի վերայ ընդհատած վայրն բարձրացած է մի փոքր լեռ—Նպատ, որ հիւսիսային սառոյտն դոզ մի կազմուած է. ուր կառուցուած է այն մեծ և պատմական վանքն, որ Ս. Լուսաւորիչ շինած է և Հերակլ [1] կայսեր հրամանով նորոգուած և ուր հայոց հեթանոսական մեծ տօներն կը կատարուէին։

Նպատ Դաշլի ջրի և Ցիատինի միջավայրը, երկուքից ևս 3-ական ժամ հեռու կը գտնուի։

Մուկաւէտ.—Հանդէպ Նպատայ՝ յարևմուտս հիւսիս, Ալաշկերտի դաշտի արևմտեան հիւսիսային եզրից քիչ բարձր, Մօլլա-Միւլէյման գիւղի մօտ Ջաթայ և Ղօփուղայ ջրի միջավայրն. Ջրաբաշխ լեռներու շարքին մէջ կանգնած են մեծ և փոքր Մուկաւէտներն։

Փոքր Մուկաւէտ մեծին հարաւն է, կաթճ շղթայով մի իրար միացած են։ Փոքրի ի հարաւ յարևելս հակեալ լանջի վերայ, մերձ ստորոտին, կայ Ս. Մուքիասանց սրբավայրն [2], այս սրբավայրից բարձր երկու լերինքս ևս զուրկ են բուսականութիւնից. միայն մեծ Մուկաւէտի արևմտեան հարաւային երեսին վերայ Ջերլկան գիւղից կը տեսնուի մի ձորակ, որոյ երկու կողերն պարզ կերևին փոքրիկ անտառակներ, որք անմատչելի են։

Մէարգամիր կամ Մէրկեմիրն Խալեազի հարաւ արևմուտքն դտնուած մեծ լեռն է, որ կայ Խնուսոյ ի հիւսիս արևելեան սահմանի վերայ, բարձր, գագաթը տափարակ և խոտաւէտ նաև ջրաւէտ է, ուր կը զետեղուին յամրան 100) տուն վրանաբնակ քրդեր, ուր կան գեղեցկապտոյն մարդագետիններ, առատ և յատակ աղբիւրներ, ձահճային վայրեր, գոյնզգոյս ծաղիկներ. մարդահասակ խոտի մէջ ոչխարաց հօտը անյայտացած է, հովուի սրինդի քաղցր ձայնը միայն կը լսուի. ինք արդէն մարդագետնոյն վերայ ընկողմանած անհոգ,

---

1. Ա յս լերանց հովիտներու մէջ 10,000 տուն Հայ գարձի քրդեր կը բնակին, որք անասունք կը բուծանեն և ուրիշ երկրի քրդերու հետ բաղդատելով լաւ վիճակ ունին։

2. Խամուր մօտ 100 գիւղ քուրդ ժողովուրդ ունի, գարուս սկիզբներն ամբողջովին Հայ էին, այսօր բոլորովին քուրդ բնակիչներ հաստատուած են. Մուրատ ի հիւսիսոյ, Արածանի յարևմտից պատած են զԽամուր, նաև արևելեան և հարաւային կողմէ պատած են Ծաղկանց լեռներու շղթայք, որով այս վայրը Ծաղկանց լեռներու արևմտեան հիւսիսային երեսի ստորոտն կընկնին, որով կարող ենք ասել թէ Ծաղկոտն գաւառն է։

---

1. Վանքը, որոյ հիանալի շինութիւնը, հնութիւնները, արձանագրութիւնները, դրից գեղեցկութիւնը առանձին նկարագրութեան կարօտ է։

2. Ս. Մուքիասանց սրբավայրի վերան նաև պիտի գրեմ ըստ կարգին։

ղուարթ կը փչէ։ Այս լեռնէն կիջնան ջրեր ի հիւսիս հոսելով Շեռեանի անունդ կտան, նոյնպէս այլ ջրեր ի հարաւ արևելս խոնարհելով Արածանւոյ աջ կողմն գտնուած Անդափի [1] և Մանազկերտի մասերն իրարմէ բաժանելով Արածանի կը թափի Քիսուկ (կարուկ) անուամբ։

Բարազան լերինք։—Ալաշկերտի դաշտի ուղղակի յարևմուտս բարձրացած են Բարազան լերինք։ ոլք Շեռեանայ գլխոյ [2] արևմտեան կողմն շրջապատած են և տարածուած Խալեաղի արևելեան հարաւային բարձունքը մինչև Բրճօի յարևմուտս գտնուած կէլին լեռն։ Այս լեռներն Բարազդի կոչուած քրդական քաջ ցեղի ամարանոցներն են. ոլք Բագրեւանդայ կը պատկանին, իսկ որոյ ձմեռանոցն կը գտնուի հարաւային երեսին վերայ որ Մանազկերտի և Անդափի կը պատկանին։

Ղարղաշան լեռն Խալեաղի հիւսիսն։ Կոռիս կամ Կոռէ Բարանան, որ քանի նշանակութիւն ունի։—կը նշանակէ ըստ քրդաց. անմազ խոց, բարձր լեռ, մակաղատեղի, դերեզման, որ կայ յարևելս Սուկաւէտի, 3—3 ½ ժամ ի հիւսիս Վաղարշակերտի. այս լեռան գագաթը կայ մի ուխտատեղի ուր քրդերը կը յաճախեն, գերեզման մի, որ տաս քայլ երկարութիւն ունի. Շեհիտներ (նահատակ) անուն մի լեռ ևս սորա արևելքը կայ։

Բօզ—թէփէ։—Երկու ժամ յարևելս Կոռիսի, Ջրաբաշխի շրթային ուղղակի միջավայրն կը գտնուի, Վաղարշակերտի ի հիւսիս արևելս 3 ժամ հեռուն բարձրացած է. դաշտիս ամենէն լայն տեղոյ ուղղութեան վերայ կը գտնուի, գագաթը 4—5 արտավար տարածութեամբ տափարակ վայր ունի։ Այս լեռն

1։ Անդափ գաւառակ մէ՛ 140-ի չափ գիւղերով, Արածանւոյ աջ և ձախ ափին վերայ, Դուռթաղ (երկու թաղ) կառավարչանիստ գիւղաքաղաքն է, Գարաքիլիսէ 6—7 ժամ հարաւ. Արածանւոյ աջ ափին վերայ է։

2։ Շեռեանայ գլուխ կոսուի Ալաշկերտի դաշտի արևմտեան ծայրն գտնուած մի մասն, որ գիւղամիջապետութիւն է 17 քրդ. գիւղերով, զորս Շեռեան գետ այս դաշտին մէջ աջ բաժանած է։

խիստ բարակ շղթայով մի կցուած է Թէքքէ բլինէ [1] (նոխազանց վայր) հսկայ և անտառապատ լերան, որ կը գտնուի Բօզ—թէփէի հիւսիսն, Հանդէպ (յարևմուտս) Կապուտայ, որոյ 2 թևերը մինչև երասխ տարածուած են։

Ջամչէ։—Բօզ—թէփէի յարևելս սակաւ ինչ ի հարաւ արևելս շեղուած Ջրաբաշխի շրթային մէջ գտնուած լեռներուն ամենէն բարձրն է, որ կայ Կաղզուանի և Գարաքիլիսայի ուղղակի միջավայրն, գագաթը ընդարձակ լեռնադաշտ, որ մեծ տարածութիւն բռնած է, ուր շատ անգամ վրանաբնակներ կը հաստատուին։

Որպէս ամեն լեռներ, այս լեռն ևս ջրառատ է. Եփրատի և երասխի առատ սնունդ կտայ։

Այս լեռնադաշտի հիւսիսային արևմտեան ծայրն կայ Պամպար սարն, ուստի քիչ ցած հոչակաւոր Վարդհօր վանք, որ Աղբուլախ լեռնէ իջնող վիշապաձոր ստուած ջրի աջ բարձանց վերայ շինուած է։

1822—1823 թուականներուն պարսկական և օսմանեան պատերազմներուն՝ մահտարաժամ փախուստ դիմող պարսիկ խաներն իւրեանց վրաններն Ջամչայի այս տափարակի վերայ զետեղեցին, այս տեղ սարվազ քաջն Յովասափ երկու խաներ սպանելով ապատեց երկու գերեալ աղջկունք. սպանեց նաև կամաւ խաներու մոլութեանց յանձնուած մի աղջիկ [2]։

Աղբուլախ։—Ջամչէ և Բօզ—թէփէ լեռներուն միջավայրն է. Ամառ գիւղէ 4—4 ½

1։ Սորա և Կապուտայ միջէն ջուր մի կանցնի. բաւական փաստեր ունիմ՝ ձեռս կարծելու Թէ այս տեղ է Արտագերից պատմական բերդը, որը Երասխի աջ ափից 3 ժամ բարձր կընկնի, որոյ արևելքէն կանցնի Կապուտայ ձորն՝ իսկ արևմուտքէն ի հիւսիս կերկարին, քանի ձորեր, կը միանան, Թէքէ—Բինէի բերդի արևմտեան ոտքն քերելով կանցնի։ Այս լեռն հսկայ, անմատչելի է, գագաթը ընդարձակ տարածութիւն և հսկայ ծառներով պատած անտառ ունի, նաև պաղ պաղ աղբիւրներ։

2։ Պատմ գիւղի տեղագրութեան մէջ մանրամասն կը գրեմ։ Այս միջոցին էր Բագրեւանդայ ս. Յովհաննէս վանուց վանահայր և առաջնոր անդուգական

ժամ ի հիւսիս. Ջրաբաշխի շղթային վերայ պեղեցիկ դիրք մունի, վճիտ, քաղցրահամ աղբերակունք. ի հիւսիս յարևելս և ի հիւսիս արևմուտս կարձակէ ջրեր, որք խորանդունդ ձորակներ կազմած են. անոնցին զգացնել կտան թէ իւրաւամբ այս ձորերից մին Վիշապաձոր անուն առած է, որ բաժոդովրդեան վարդհօր Ջուր կասուի:

Այս լեռը ի հարաւոյ կալոյի ձորին կը պարզևէ առատ ջուր, որ միանալով Ջամչէի ծնած Ջրին՝ առաջ կգնայ մինչև Շեռեան:

Նաև արևմտեան հիւսիսէ կապուտայ Մատուռ մի ջուր կարձակէ, որ աչ կողմից կապուտայ ձորն կիջնայ, ուստի երասխ կը թափի:

Թանդուրակ 1.—Ջամչէ լեռնէ յարևելս, բաւական հեռաւորութեան վերայ նաև այս շղթայի հիւսիսային երեսին վերայ, Գարաքիլիսէի արևելեան հիւսիսն 6 ժամ հեռուն կայ, և մեծ ձորակներ կարձակէ ի հիւսիս, որք ինձէ և Փառնակուտ ջուր անուններով երասխ կը թափին:

Ասախ սար.—Սինակ լեռներու արևմտեան հիւսիսն, Ջամչէի արևելեան հարաւն Ալաշկերտի դաշտի վերայ կը հայի. որ սկզբնաւորութիւն կտայ, ըսախս, ի հնոց անուանած Աղից մեծ ձորոյն, որ այժմ Ախտայ կամ Ճկմի—չաթոյի Ջուր կասուի:

Սինակ.—Այս լեռներն Ախտայի մօտէն կսկսին բարձրանալ և տարածուիլ այնպէս որ դաշտային մնան տակաւ առ տակաւ բռնելով՝ հարաւային կողմէ կեռակեռաւ, կօլասօր և Դաշլիչայ Պարսիկ գիւղերու մօտ. Մուրատի աչ եզրն կընդհատի, որով Ալաշկերտի դաշտն Ճիրաւայ դաշտից կը բաժանուի. Սինակ գագաթից իւր ուղղութիւնը յարևելս երկար շարունակելով՝ կը հասնի Գայլատայ ծովակին, որ Սիննկայ [2] կը պատկանի և այլ և այլ անուններ առած լեռներով շրջապատած է. ատկէ և այս շղթայն այլ և այլ անուններով կը հասնի Մասիս. որ կայ ուղղակի յարևելս կոյս:

Սինակ լեռներու հիւսիսային կողմն կայ Գանտիլի գեղան (ռակեայ կանթեղ կամ լեռ), իսկ շղթային վերայ Ղզըլ—Ջիարէթ (կարմիր ուխտ) լեռն, որ շղթայի վերան է, որոյ գագաթը կը գանուի մատուռ մի, մատուռի տակից երկու Ջրաղաց գարձնելու Ջուր կը բղխի ևլն:

(Շարունակելի). Ս. ՀԱՑԿՈՒՆԻ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՍԱՆ ՀԱՓԱՀՈՒՆ ՊԱՀՔՏՔԱՉԻ ՍԱՄՔՈՆ

(Շարունակութիւն) *.

Օնոբէյնը, որ 16-րդ դարու Ֆրանսիական փիլիսոփայ է, բարոյական կրթութեանը տալիս է առաջին տեղը: Նա մեղադրում է իր ժամանակակից մանկավարժներին խմաստակութեան (պետանտիզմ) մէջ: Այդ միջոցին խմաստակութիւնն արտայայտուում էր երկու տեսակ. աշխատում էին սովորցնել այժ տալ նուրբ և փքուն մտածողութեան և յիշողութիւնը ծանրաբեռնում էին զանազան բաներով, առնուշտիկը թողնելով գիտակցական խելամտութիւնը: Մօնտէյնը որոշում է թէ ինչպէս էր կամենում բարեփոխել կրթութիւնը և ինչպէս էր մտածում փոխել այն կրթական եղանակը (մեթօդ), որ արգելք էր դառնում խորհեցողութեան և դատողութեան, զարգացնում էր միայն յիշողութիւնը: Նա ասում է, որ երեխային պէտք է պատուաստել այն ընդհա-

---

Խաչատուր վարդապետն, որ ամբողջ Բագրեւանդայ հայ ժողովրդեան ըռէներն հաւաքեց, որոց հետ խորհուրդ կազմելով զինեցին ամբողջ ժողովուրդն, պատերազմեցան պարսից հետ:

1. Երկու Թանդուրակ լեռներ կան մին Ալատաղի մէջ ի հարաւ Նպատայ, երկրորդն այս:

2. Որպէս Թանդուրակայ հովիտներու մէջ՝ նոյնպէս Սիննկայ լեռնագագաթի և հովիտներու մէջ 25 գիւղ եղեր ժողովուրդ կայ, նոյնչափ մի ևս քուրդ, թուրք ժողովուրդ:

նուր յատկութիւնները, որոնք մարդուն դարձընեմ ողջամիտ և կորովամիտ: Մօնտէյնը հաստատում է, որ կրթութիւնը չը պէտք է նպատակ ունենայ պատրաստել մանուկներ, զոր օրինակ արուեստաւորներ, պրօֆեսօրներ, այլ երեխային կատարեալ մարդ դարձընել: Թէպէտև Մօնտէյնը փոքր ինչ սիրում է ազատութիւն տալը և բնաւորութիւնը յարգում է, բայց այնուամենայնիւ չի կարծում, որ երեխային կարելի է իր կամքին թողնել և իր «կրթութեան փորձում» ասում է, որ երեխային պէտք է յանձնել մանկավարժին կրթելու: Նա շեշտելով ասում է, որ պէտք է ղեկաւարապէս զարգացնել աշակերտի բարոյական սկզբունքը և դատողութիւնը: Հետևաբար նա խորհուրդ է տալիս ուսուցիչներին զարգացնել աշակերտի դիտակցական ինքնուրոյնութիւնը, նախաձեռնութիւնը: Այդ ցանկութեանը հասնելու մէջոցներից մէկն է երիտասարդին վաղօրօք դնել մարդկային կեանքի հոսանքի մէջ (!): Առարկաները դիտելը, որ այժմ անուանում է իրաբանական ուսում (leçon de choses) Մօնտէյն անուշադիր չէ թողել իր կրթական ծրագրի մէջ: Պատմութիւն դիտենալուն Մօնտէյնը մի մեծ կարևորութիւն չի տալիս, այլ ասում է, որ կարևոր է պատմութիւնից եղրակացնել այն բարոյական հիմունքը, որ պիտանի է: Ըրքան խօսուեց Մօնտէյնի մասին, բաւական է, որ մի ձիշտ գաղափար ունենանք նրա խելացի կերպիւ բարեփոխած մանկավարժական եղանակի վերաբերմամբ: Գիզօն հետևեալ գովասանական խօսքերն է ասում նրա մասին, թող կատարեն ինչ որ Մօնտէյնն առաջարկում է, թող հետևեն նրա խորհուրդներին, կարելի է դրանց վրայ էլի բան աւելացնելու հարկաւորութիւն լինի, եթէ աշակերտին աւելի սովորցնելու կարևորութիւն լինի քան թէ նա՝ Մօնտէյն է առաջարկում, բայց պէտք է ընդունել նրա առաջարկած ճանապարհով, թէ և նա շատ բան չէ ասել, բայց ինչ որ ասել է՝ ուղիղ է, ուրեմն առաջ պէտք է Մօնտէյնի գաղափարները ուսումնասիրել և յետոյ միայն նորանից յաջորդողներինը:

Ռ.-Ջէք: Ֆրանսիական վերածնութիւնը չէ ունեցել կրթութեան գործում մտաւոր զարգացման աւելի ազդու նորոգիչ, աւելի ինքնուրոյն հնարագէտ մարդ՝ քան Րաբլէն: Նրա շարադրութիւնը «Գարգանդիւա» և «Պանտագրիւէլը» պարունակում են նորագոյն մտաւոր զարգացման առաջին ծրագիրը, թէպէտև ուներն իրենց անհաճոյ և տարօրինակ կողմերը: Րաբլէն իր ամբողջ կեանքում ունեցել է միջանկութիւն, այն է՝ ճշմարտութեան ուսումնասիրութիւն և դիտութեան սէր: Գարգանտիւայի և Պանտագրիւէլի մէջ ուսուցիչը և աշակերտը զբաղուած են աւելի տեսական կեանքով, որպէս դիանականներ և բանաստեղծներ և ոչ իրական կեանքով: Նա ձգտում է դէպի գաղափարականը, որ չը պէտք է արհամարհել, որ և միշտ բարձր է դասուել:

Նա ասում էր «առողջ խելքը կարող է լինել միայն առողջ մարմնում»: Նրա ծրագիրն ուղղած էր մարդուս ամբողջութեան վրայ, նա մենակեաց չէր իր դրագրանում, բայց նա ասում էր, թէ այն մարդը, որ նշանակուած է գործնական և քաղաքացիական կեանքի համար, ունի պարտաւորութիւններ դէպի իր ազգը: Նրա վերոյիշեալ հեղինակութեանց մէջ աշակերտը յանձնուած է պատուական ուսուցիչ Պանքրատին, ուրեմն չի կրթուում այնպէս, ինչպէս սովորաբար կրթուում են ուսումնարանում, բայց հիմնական սկզբունքը, որի վրայ նա հիմնում է այդ կրթութիւնը, կարելի է իրագործել միայն մի ուսումնարանում: Նա ընդունել է որպէս կրթութեան եղանակ կեանքի բնական ընթացքը, տնային կերպիւ օգտուում է առօրեայ դէպքերից, իսկ կրթութեան ընթացքի կանոնաւորութիւնը գտնուում է Պանքրատի հայրական տրամադրութեան ներքոյ: Այդ իսկ Սօկրատական կրթութիւն է, ուր մարդկային և աշակերտական խելքը թափանցում են մէկը միւսի մէջ: Ուսումը կատարուում է խօսակցութեամբ պրօսանքի ժամանակ, որ լի է դիտողութեամբ և

օգտաւէտ խորհրդածութեամբ ու յաճախակի պատահմամբ դիտնականների հետ։

Եան Կոմենիոսը (Կոմենսկի) 1592—1671։ Ծնուեց Մօտաւիայում՝ Ընգարիայի սահմանի մօտ։ Կոմենսկին աւելի յայտնի է Կոմենիուսի անունով։ Պէստալոցցու նախընթաց մանկավարժներից ամենաերևելին է։ Մինչև նրան անուանում էին, «իսկ դործնական կրթութեան հայր»։ Մեծ մանկավարժի անունը նա ստացել է գրելով հետևեալ երեք աշխատութիւններն, այն է.—Մեծ վարդապետութիւն (Didacdica Magna), Լեզուների դուռն (Janua linguarum) և Պատկերազարդ աշխարհ (Orbis pictis)։

Կոմենիուսի «Մեծ վարդապետութիւնը» ամենանշանաւոր աշխատանքներից մեկն է, որ գրուել է մանկավարժական դիտութեան մասին։ Առաջին 12 գլուխներում հեղինակը բացատրում է իր վարդապետութեան ընդհանուր սկզբունքը։ Նա ասում է, մարդը պէտք է ուղեղով դիտութիւն և բարոյական ու կրօնական զգացմունք։ Դրանց սեմերը կան մարդուս մէջ, բայց կրթութիւնը հարկաւոր է դրանց զարգացման համար։ Երկու սեռի երեխաներն էլ հարկաւորութիւն ունին կրթուելու։ Այդ կրթութիւնը պէտք է դրանց տան հասարակաց ուսումնարաններում, որոնք պէտք է նոյնպէս կազմակերպուած լինին, որ երեխաները կարողանան ստանալ կատարեալ կրթութիւն։ Հետևեալ գլուխներում Կոմենիուսը պարզում է իր ծրագիրը և կրթական եղանակը։ Դասատարակչական հմտութիւնը նա, պահանջում է իրերի և ժամանակի կանոնաւոր դործադրութիւն։ Ամենից առաջ նա պահանջում է ֆիզիքական կրթութեան իրագործումը, յետոյ նա բացատրում է իր մանկավարժական եղանակի մասնաւոր սկզբունքը։ Նա ասում է, ուսուցանելը պէտք է լինի դիւրին, հիմնաւոր, արագ, պէտք է համապատասխանի ողջմտութեանը, տայ աշակերտին դործնական տեղեկութիւններ առարկաների մասին։ Կոմենիուսը յաճախ կրկնում է այն երևելի կարծիքը՝ թէ մտախոհութեան մէջ չը կայ ոչինչ, որ չանցնի մարդուս մտքով, այսինքն չը կայ ոչ մի գաղափար, որ ծագի առանց զգայարանների միջնորդութեան, ամեն մի առարկայ պէտք է այնքան անգամ ցոյց տալ աշակերտներին, որ նա ըմբռնի նրա որպիսութիւնը աչքով, ականջով, մտքով, հոտաւէտ իրերը՝ հոտառութեամբ, կարծր իրերը՝ – համով, շօշափելու իրերը՝ շօշափմամբ և այլն։

Ուսուցքեր սովորելը պէտք է կատարուի իրեր անուանելիս, բարոյական և կրօնական ուսումը պէտք է կատարուի որոշ կերպիւ, այն է աշակերտը պէտք է սովորի զսպել իրեն, ուղղութիւն տալ իր ցանկութիւններին, սիրէ բարին յանուն բարեսիրութեան։

«Պատկերազարդ աշխարհն» ամենից աւելի հռչակեց Կոմենիուսի անունը։ Սկզբում գրանում է մի այբբենարան, որի իւրաքանչիւր տառը համապատասխանում է մի որևէ անասունի ձչին կամ երևոյթին ծանօթ մի որևէ ձայնի։ Գրքի գլուխները պատկերազարդ են, ունին համարներ, որոնք համապատասխանում են բնագրի որոշ խօսքերին և կարճ դարձուածներին։

Յառաջաբանի մէջ հեղինակն ասում է. «Հմտութիւնը կայանում է նորանում, որ առարկան ներկայացնուի աշակերտի զգայարաններին այնպէս, որ նա հեշտութեամբ ըմբռնի»։ Այս է մանկավարժական գործունէութեան հիմքը, որովհետև մենք չենք կարող ոչ գործել, ոչ խելօք խօսել՝ եթէ չը գիտենանք, թէ ինչ ենք ցանկանում անել կամ ասել։ Ի հարկէ իմացականութեան մէջ չը կայ ոչինչ, որ առաջուց մտքով անցած չը լինի, այդ պատճառով էլ այդ է հիմքը բոլոր իմաստութեան, ճարտարութեան, բարի և խելացի գործողութեան, հենց այդ պատճառով էլ պէտք է խնամքով վարժել խելքը, միտքը, զգայարանները, որ աշակերտը լաւ ըմբռնի բնական իրերի դանազանութիւնները և յատկութիւնները, հենց այդ է, որ այժմեան ուսումնարաններում սովորաբար անուշադիր է թողնուում։ Երբեմն աշակերտին սովորցնում են այնպիսի բաներ, որ նա չի կարողանում ըմբռնել և այդ պա-

տահում է այն պատճառով, որ չեն ներկայացընում նրա զգայարաններին, նրա երևակայութեանը այդ իրերը ինչպես հարկն է։ Այդ է պատճառը, որ մի կողմից սովորցնելը դժուարանում է, իսկ միւս կողմից էլ լինում է անպտուղ։

Պէտք է ասել, որ Կօմէնիուսը չը կարողացաւ բաւարար կերպով իրագործել իր ծրագիրը, որ շատ լաւ նախագծած էր։ բայց այդ Կօմէնիուսը ոչինչ հաստատ և վերջնական մի բան չստեղծագործեց, նա միայն մի զարմանալի առաջընթաց մարդ էր։

Լոկ։ Սա գլխաւորապէս մի կատարելագործուած մարդ էր, քննում էր հոդու տալրերը։ Հոգեբանութիւնից մանկավարժութեան անցնելը հեշտ բան է և նա չէր կարող դժուարութեանց հանդիպել, եթէ ցանկանար իր գիտութիւնը կանոնաւոր կերպով գործադրել։ մարդկային խելքը բնական եղանակով կրթելու, ուղղութիւն տալու համար 1693 թ. նա հրատարակեց «Իմ՝ կարծիքը մանկավարժութեան մասին» անունով գիրքը։ Այդ աշխատանքի համար նա պատրաստուած էր երկարամեայ փորձառութեամբ։ Իր ծանօթ ընտանիքներում, ուր նա յաճախում էր, լաւ ուսումնասիրեց երեխաներին և կրօնավանութեամբ ուսումնասիրելով նրանց բնաւորութեական զարգացումն, հոգին, կարողացաւ մանկավարժական փորձառութիւն ձեռք բերել և գրել «իր կարծիքը մանկավարժութեան մասին»։ Այդ գրուածից կարելի է եզրակացնել 3 սկզբունք.— 1, Ֆիզիքական կրթութեան մէջ մարմնի ամրապնդութեան սկզբունքը. 2, բարոյական կրթութեան մէջ պատուոյ զգացմունքի սկզբունքը որպէս կանոն քաղաքացիական կեանքի. 3, գործնականութեան սկզբունքը։

Լօքէն չի կամենում պատրաստել մանուկներ, գիտնականներ, այլ գործնական մարդիկ, որոնք ունենալով զանազան տեսակ կարևոր գիտութիւններ, կարողանան մաքառել կեանքի դժուարութիւնների դէմ կարողանան կառավարել իրենց ունեցածը, հմուտ լինեն իրենց արուեստում վերջապէս կարողանան կատարել իրենց պարտաւորութիւնները՝ որպէս քաղաքացի։

Լօքէն առանձին խնամքով մշակել է իր գրուածքի այն մասը, որ վերաբերում է բարոյական կրթութեանը։ Լոկ միայն գիտութիւնը նրա համար առանձին նշանակութիւն չունի։

Նա ասում է, մի ազնուական բացի իր որդուն թողած հարստութիւնից՝ պէտք է աշխատի, որ նրա որդին լինի առաքինի, խոհեմ գիտուն, ունենայ շարժուածքի լաւ ձևեր։

Լօքէն ընդունեց նաև Կօմէնիուսի հետևեալ սկզբունքը, թէ անպատճառ մեզմութիւնը պէտք է լինի մանկավարժական կանոն։ Այս կանոնին համաձայն պէտք է ասել դասախօսակէին եղիր անպատճառ, մինչև անգամ խիստ՝ որ կարողանաս բարի լինել։

Ժ. Ժ. Ռուսսօ։ Ռուսսօն ծնուեց Ժընեվում 1712 թ. յունիսի 28-ին։ Նա գրեց մի ամենակարևոր, ամենագեղեցիկ գիրք իր դարու մանկավարժութեան մասին։ Դա այն մարդկանցից է, որոնք խիստ նեղդործել են մարդկանց խելքի և մանկավարժութեան եղանակների վրայ, ոչ միայն Ֆրանսիայում, այլև Գուլիցարիայում, Գերմանիայում, ամբողջ Եւրոպայում, նաև Ամերիկայում։

Ռուսսոյի մասին մանկավարժական տեսակէտից կը նշանակէ խօսել նրա «Էմիլ» անուն գրքի մասին։ Այս գիրքը, որ բաղկացած է 7 գլխից՝ տպագրուել է հետևեալ վերնագրով. «Էմիլ կամ կրթութեան մասին, աշխատութիւն Ժ. Ժ. Ռուսսոյի—Ժընեվի քաղաքացու»։

Դժգոհ լինելով այն հասարակութիւնից, որ շրջապատում էր նրան և ցանկանալով տեսնել այդ հասարակութիւնը բարեփոխուած, նա չի բաւականանում խիստ մեղադրանքներով, նա սկսում է պատրել և գտնում է մի ազգ միջոց հասարակութեան բարւոքման համար։ Այդ միջոցը կրթութիւնն է։

Հասարակութեան ուշադրութիւնը գարձնելով ժամանակակից ընդունուած կրթութեան վատ եղանակի վրայ, ձեռնարկելով Բարլէի և Կօնտէյնի հազիւ նախագծած փորձերին, վե-

բաճելով կրթուԹեան գործը պարզ և խելացի սկզբունքի, սովորցրեց հետապօտել բնուԹիւնը ուսուՑիասիրել կարևոր պահանջները և երեխայի մտքի ու հոգւոյ զօրուԹիւնը: Րուսսօն մեծ ծառայուԹիւն արեց՝ նորագոյն մանկավարժուԹեան համար:

Ուրիշներն էլ կարող էին ուսուՑիասիրել այդ առարկան, բայց ոչ ոք չէր կարող գործադրել նոյն եռանդը, փայլուն ոճը, սէրը, պերճախօսուԹիւնը:

Րուսսօն չէ գրել իր «Էմիլը» ի նկատի ունենալով նախակրթական գործը: Նա չի մտածում ուսուՑիարանի մասին: Նրա կարծիքները ուղիղ են, և կարելի է մանաւոր կերպիւ օգտուել նրա այդ գրուածքից և գործադրել ուսուՑիարանների համար:

«Էմիլն» է մի հարուստ, ազնուատոհմ որբ տղայ, յանձնուած դաստիարակչին, որ նրան պահում է գիւղում, ձեռքը գլուխ չէ տալիս, ուսուՑիարան չէ ուղարկում, թողնում է առանց ուսուՑչի, առանց ընկերների, գնում է իր աշակերտին մի այնպիսի անել դրուԹեան մէջ, որ ոչ մի յայտնի աշակերտական դրուԹեան չի համապատասխանում: Աշակերտը ինքը գտնում է, աւելի ճիշտ ասել, հնարում է այն ամենը, որ դարեր շարունակ մարդիկ հնարել են, այն է՝ գիտուԹիւններ, բարոյական սկզբունքներ, կրօն և այլն:

Ը նայելով որ այդ կրթական եղանակը շատ տարօրինակ է, բայց և կարելի է օգտուել Րուսսօյի մանկավարժական դիտողուԹիւններից: Այդ դիտողուԹիւնները պարտանալի կերպով նպաստեցին հասարակաց և մասնաւոր կրթուԹեան եղանակների բարւոքմանը: Մանկավարժները հանեցին այդ դրքից այն հիւԹը, որ գործադրելի էր:

Րուսսօյի կարծիքով ամենակարևորն է ուսուՑիասիրել երեխային, որ կարելի լինի նրան ուղղուԹիւն տալ: Երեխայի բնաւորուԹիւնը քիչ են ճանաչում և այն սխալ գաղափարները, որ ունեն երեխայի մասին՝ պղտոր են աւելի մեծ սխալների մէջ: Գիտնականները պարտաւած են նրանով, Թէ մարդս ինչ պէտք է դիտնայ, առանց մտածելու Թէ երեխան դէռ կատարեալ մարդ չէ: Րուսսօն ասում է, Թող իմ աշակերտին դարձնեն եկեղեցական, փաստաբան, ինձ փոյԹ չէ: Այդ կոչումներից առաջ բնուԹիւնը մարդուս կանչում է դէպի կեանքը: Իմ ցանկուԹիւնն է սովորցնել նրան կանոնաւոր կեանք վարելու: Ես համոզուած եմ, որ երիտասարդը դուրս գալով իմ ձեռքի տակից, չի լինի ոչ պաշտօնեայ, ոչ զինուոր, ոչ էլ քահանայ, նա ամենից առաջ կը լինի մարդ՝ ինչպէս հարկն է: Չէնց դրան էլ, ամենից առաջ պէտք է ձգտի մարդս: Յետոյ նա կարող է դառնալ՝ ինչ որ կամենում է և ամէն տեղ էլ նա իր տեղումը կը լինի: Ահա այս նպատակին պէտք է ձգտեն բոլոր ուսուցիչները: Այդ մի այնպիսի գաղափար է, որի դէմ չէ կարելի վիճել, որև կարող է մանկավարժական եղանակի մէջ մեծ փոփոխուԹիւններ ներմուծել: Ամենակարևորն, ասում է Րուսսօն, կրթուԹեան մէջ՝ մարմնի մարզումն ու ամրացումն է: Ամրացումը, որից կախուած է բոլոր ճիւղաձը՝ միշտ արհամարհուած է եղել, դատապարտուած է եղել արգելման առողջապահական վատ կանոններով, ճնշողուԹեամբ, երկարատև դասերով, դրագրուԹեամբ, որոնց ժամանակ խեղճ երեխան Թուլացել, դունատուել է: Րուսսօն բարձրացնում է իր ձայնի այս ախուր երևոյԹի դէմ և հանդիսանում է երեխայի պաշտպան, մատնացոյց անելով այդ անբնական երևոյԹի վրայ: Նա ասում է. «մարզեցէք, ամրացրէք երեխայի մարմինը, պահպանեցէք նրան առողջ, որ կարելի լինի դարձնել նրան ղգաստ, խելացի: Նա պէտք է պարապի ձեռագործուԹեամբ, աշխատի, վարժուի, բղաւի, շարժողուԹեան մէջ լինի, որպէս զի իր ուժերով մարդու նմանի և դրանից յետոյ նա մարդ կը լինի խելքով:

Րուսսօն ասում է, որ բաւական չէ միայն ամրապնդել մարմինը, այլ խելքն էլ պէտք է մարզել՝ նրան ուղիղ ընԹացք տալով:

Րուսսօն արգելում է երեխայի ձեռքը գլուխ տալը մինչև նրա 12 տարեկան հասակը, նրա

գիրքը բնութիւնն է։ Բնութեան մասին պէտք է տալ նկատողական դասեր։ Նրան շրջապատող բնութիւնը պէտք է՝ զարգացնէ նրան, տեսնելով սովորի, հարկաւոր չէ, որ նա դիտութիւններ սովորի, այլ պէտք է նրան սովորցնել, որ նա դիտութիւնները սիրէ, սովորցնել ուսումնասիրելու եղանակներին (մէթոդ)։ Երբ դիտութիւններ ուսումնասիրելու ձգտումն արդէն զարգացած լինի՝ նա ինքը կուսումնասիրէ դիտութիւնները։ Այդ կերպով կը զարգացնենք երեխայի մէջ սկզբունքի ոգին, բնաւորութիւն, ինքնաճանաչութիւն, գործող խելք, բանաւոր կամք և արթուն խիղճ։

Ռուսսօն կամենում է, որ ամեն մարդ, ինչ դասակարգի էլ որ նա պատկանելիս լինէր՝ սովորի մի արհեստ, որով նա կարողանայ իր համար հաց աշխատել։ Այսուհետև թէ նա ինչ ուղղութիւն է տալիս երեխայի հետաքրքրութեանը, նրա խելքին, հնարագիտութեանը, նախատեսութեանը։ Տեսէք թէ ինչպէս է կամենում կազմակերպել նրա ընդունակութիւնները, որ նա կարողանայ ամեն բան տեսնել, կատարել։ Այդ կերպով երեխայի մէջ ցանկութիւն կը ծագէ ամեն բան ճանաչելու, ամեն բանի պատճառը դիտնալու, նա ոչինչ չի ենթադրի և չի ընդունի մի բան, որը նա չի հասկանում։

Որանից հետևում է, թէ նա ինչ կարևորութիւն է տալիս իրերի ուսումնասիրութեանը։ Պէտք է ամրապնդել երեխայի մարմինը և զարգացնել նրա զգայարանները, յետոյ նա զարգացնում է նրա խելքը, դատողութիւնը, այդ կերպով նա զարգացնում է նրա մարմինը և մտաւոր ու հոգեկան կարողութիւնները։ Ուրեմն նա երեխայից կազմում է մի էակ, որ գործում է, մտածում է և մարդ դառնալու համար նրան միայն է պէտք, որ նա կարողանայ սիրել և ունենալ ազնիւ զգացմունքներ։

Ռուսսօն զարմանալի է, երբ խօսում կրթութեան ողջմտութեան և ընդունակութիւնների բնական զարգացման մասին, երբ նա պնդում է, որ հարկաւոր է ամրացնել երեխայի հոգին և մարմինը, որ ձնշում է ազատ վարժապետը։

Նա իրաւացի է, երբ քակում է երեխայի կապանքը, մերժում է անդիր անելը, լոկ խօսքեր անդիր սերտելը, սովորելու մեքենական ձևերը, վաղաժամ դիտութիւնների սովորցնելը, որոնք չեն կարող արմատ բռնել երեխայի ուղեղի մէջ։ Նա իրաւացի է, որ պահանջում է, թէ վարժապետը պէտք է միջոց տայ աշակերտի բնութեանը, որ ինքնուրոյն աճէ, զարգանայ, որ վարժապետը լաւ ուսումնասիրէ նրա բնաւորութիւնը աշխատէ նրան հետաքրքրել, ցոյց տայ, հասկացնէ նրան ուսումնասիրութեան օգուտը, տայ նրան դիտողական ուսում, ճանաչացնէ նրան կեանքի պիտոյքների հետ, գրքերից դուրս նրան ուրիշ կեանք էլ ցոյց տայ, հասկացնէ ամեն բանի կարևորութիւնը, օգտակարութիւնը, տայ երեխային դաստիարներ, զգայմունք, սովորցրնի կարգապահութիւն և պարտաճանաչութիւն։

Երեխայի կեանքը նմանում է հասակն առած մարդու կեանքին, նա ընդունակ է ունենալ նոյն զգացմունքները։ Երեխաների աշխարհն էլ մի փոքրիկ աշխարհ է, ուր պատահում են նոյն վտանգները, հրապոյրը և նոյն մրցումը։ Երեխաները պէտք է դիտուած լինին նոյն դէնքերով, պէտք է ունենան խիղճ, սէր դէպի բարին, պարտաճանաչութեան զգացմունք, անհաշիւ հեռանդ դէպի առաքինութիւնը։ Պարզ է այդ բոլորին ընդունակ է, երեխան նոյնպէս։ Գլխաւոր բանն է որ ուսուցիչը կարողանայ չափել գործադրելի ոյժը, գործ դնել համապատասխան լեզու և պահանջ երեխայի հասակին համաձայն։

Ահա սոքա են Ռուսսօյի գրուածքից յայտնի ընդարձակ իրաւացի դաղափարները, որ ներկայացրինք այստեղ՝ որպէս ընդհանրացած գաղափարներ, որոնք մեծ ծառայութիւն են ա-

ՇԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԻՐ՝ բառս Շարական, ինչպէս տեսանք, գործ է դրուել այնպիսի տօնների երգերի վերայ, որոնք անզուգական են իրենց տեսակի մէջ. այսինքն, այդ տօներըը իրենց հատանըման տօների նման չունեն ոչ Օրհնութիւն, ոչ Հարց, ոչ Մեծացուսցէ, ոչ Աղօրմեա, ոչ Տէրերկնից, ոչ Ճաշու և ոչ Համբարձի. և եթէ ի յիշատակ և ի պատիւ սմանց սրբոց վերջին դարերում գրուել են Օրհնութիւն, Հարց, Մեծացուսցէ, Աղօրմեա, Տէրերկնից, Ճաշու և Համբարձի, և դրուել նրանց ձակատին Շաբաթն, այս մակդիրը ոչ եթէ այդ նոր յաւելուած շարականների վերայ է դրուած, այլ իւր հին կամ նոր Մանկունքի վերայ. զօրեր ձեռքում գտնուած Շարականը ունի պաշտելի կոյս Սանդխտի վերայ յօրինած նորագոյն Օրհնութիւն, Հարց, Աղօրմեա, և Տէր յերկնից, և ապա կրճատ ձևով «Քէ պարծի այսօր» իւր հին Մանկունքը, իսկ ընդհանուրի ձակատին գրուած է, «Շարական. Սրբոյն Սանդղխտոյ. Ա[րհնութիւն]». Թղ. 165[բ]։

Այս խորագիրը մենք պիտի հասկանանք ոչ եթէ նոր է և գործ գրուած ընդհանուրի համար, այլ իւր հին Մանկունք «Քէ պարծի այսօր» խորագիրն է, և ճիշտ այսպէս էլ գրուած է տպագիրը Շարականի մէջ, չունենալով իւր կողքին ոչ Օրհնութիւն, ոչ Հարց, ոչ Աղօրմեա և ոչ Տէրերկնից, որոնք եթէ լինէին, պէտք էր ըստ օրինի գնել կանոն կամ կարգ խորագրերը, որոց տակ ընկնում են Օրհնութիւն, Հարց, Աղօրմեա, Տէրերկնից ևն, ինչպէս տեսանք իւր տեղում։

Այսպէս ուրեմն հին շարականների ընդհանրել նորագոյն մանկավարժական գործը հասատա հիմքի վրայ գնելու համար։ Այդ գաղափարներն արձագանք գտան ամեն տեղ, որովհետև հարկաւոր ժամանակին ծնուեցին։ Սկզբից մինչև Պէստալոցցին և Ֆրէօբէլը այդ գաղափարները նպաստել են Գերմանիայում մանկավարժական եղանակները վերանորոգելու։ Տիկին Սկալ Իլ Սոսիլը, Հայր Ժերարը և բոլոր Ֆրանսիական հեղինակները, որոնք պարտպել են մանկավարժութեամբ ընդհացել են նոյն ձանապարհովը, որ ցոյց է տուել Լուսաւոն։ Ինչ որ Կօմենիուսը, Լաբլէն, Մօնտէյնը նախապատրաստել են, Լուսաւոն գրանց մասին խոսել է ազատակերով, կրքով։ Նա յաջող կերպով հաստատեցրել է ձշմարտութիւնը նոր կարծիքների և առաքինութեան հետ, նա գրգռել է մանկավարժների ուշադրութիւնը, գործել են կուսակցութիւններ և գրանցով առաջացել է մի ամբողջ գրականութիւն։ Մետպէս Պարիզի արքեպիսկոպոսը գտատպարատել էր և մերկեվում այրել էր տուել Լուսաոյի Էմիլը անուշով գրուածքը և հեղինակին բանտարկութեան պատատպարատել։ Իրենից էլ աքսորել էին նրան, այնուամենայնիւ նրա հատատակորոշների և համամիտների աչքում Էմիլն այնպիսի մի պատուական գրուածք էր հատատուում, որ մանկավարժական գրականութեան մէջ առաջնակարգ տեղ էր բռնում, ուստի Լուսաոյի մի քանի մտքերը սրշտ օրինակելի կը մնան մարդկային կրթութեան գործի համար։

(Շարունակելի)։

ԲԺ. ԼԵՒՈՆ ՏԻԳՐԱՆԵԱՆ։

նուր կարգն ու դասաւորութիւնը չխախտելու համար, այն սուրբ նահատակները և արժանապատիւ եկեղեցւոյ սուրբ հայրերը, որոնք եթէ ունեցել են յառաջօրէն կամ յետոյ միայն մի հատ Մանկունք, դոքա կարգ և կանոն խորագրերի տակ ամփոփուած շարականներից դուրս հանուելով, իբրև ազատ երգեր, կարգաւ գրուել են միասին, խաչագիր դնելով նրանց վերայ ՇԱՐԱԿԱՆ՝ որը ոչ այլ ինչ է նշանակում եթէ ոչ մի խումբ հոգևոր երգերի, մի խումբ շարականապուրկ ոտանների շարք, կարգ, ճիշտ այնպէս, ինչպէս Կանոն, կարգ, Օրհնութիւն, և երգ խորագրերը իրենց իմաստի համաձայն գոյծ են դրուած իրենց տեղերում: Միով բանիւ Շարական՝ երգերի դասաւորութեան անուն է և ոչ երգի:

Գալով Շարական բառիս բացատրութեան, նա կազմուած է իակ և իակ Շ բառից [1] և ածանցուած ական մասնիկով, կազմուել է Շ-ական, որպիսին սովորական է մեր լեզուի մէջ. զօ. զօր—զօրական, դաս—դասական, խումբ—խմբական և այլն ևլն:

Իակ այս թանկագին անունը ճրբ է առել իւր վերայ այն Մաշտոնը, որին վերևում «Երգարան, Հոգևից Մաշտան և Բուրաստան» կոչեցինք, և ճրբ են առել իրենց վրայ և՛ նոքա, որոց երգ կամ հոգևոր երգ անուանեցինք:

ԺԲ և ԺԲ-րդ դարերում երբ ոմանց երգահան Հայրապետների և ընորհալի Վարդապետների ձեռքով շարականների պակաս մնացած ցանկն ու ցուցակը լրանալով, պլնաւորուելով, կազմուում և գոյանում է իբրև մի Գիրք, այս Գրքի և նրա մէջ բովանդակուած երգերի համանման անունս —Շարական, նէգ բառի իմաստով առաջին անգամ գործ է ածուում՝ Գրիգոր վկայասէրի, Ներսէս ընորհալու և սրանց յաջորդների բոլոր գրածները նոր բան համարող մեր Շարականի Սարգիս գրիչը, 19 տեղ յիշելով իւր նշանաւոր Ցօնայուցում Շաբաւնան և Շաբաւնէնք, և ապա Ներսէս Շնորհալին, այսպէս տողելով իբրև աւարտաբանութիւն իւր «Առ սուրբ Հրեշտակն» վերնագրով խնկանուէրը Մաղթանքի տակ.

«Յարմարեցաւ շինուած ճառիս,
Եւ եղանակք շարականիս,
Առ ի պատիւ մեծի տօնիս» [2]:

Իակ ՇԱՐԱԿԱՆ՝ իբրև Գրքի անուն, առաջին անգամ կարդում ենք ԺԲ-րդ դարում ապրող ու երևելի շարականներ գրող Վարդան Բարձրաբերդցու պատմութեան մէջ, ուր խօսում է նա Դունայ ժողովի հրամանաւ Է-րդ դարում շարականները կարգի դնող՝ Դպրեվանքի առաջնորդ «Ցան» կոչեցեալ գիտնական Բարսեղ վարդապետի և նորա ընտրած շարականների մասին,—«Ճոնընտիր կոչի Շարականն, որ այժմ պաշտի յեկեղեցիս մեր [3]:

ՇԱՐԱԿՆՈՑ՝ որ դարձեալ Գիրք է նշանակում գրում է մի գեղեցկագիր Շարականի գիրը. «Փառք . . գրեցաւ եղանակաւոր տառս ի թուականութեանս Հայոց. ՉԾԷ (1308). ի պարոնութեանս Հայոց աւշնի և եղբաւր իւրոց ալինախի. որդոց ալքայլին լեռնի. Եւ ի հայրապետութեան տն կոստանդնա կեսարացոյ. ի մայրաքաղաքս ի սիս. ձեռամբ բազմամեղ գրչի գրիգորի գպրի . . .» և ապա նոյն թուին Շարականիս գրողը գրում է ոմն Մխիթար երէցի ձեռքով,—«Փառք . . . ես մեղուցեալ ծառայս այ քրիստոսատուր աբեղայս որ գնեցի գլաբոկնոց ի հալալ արդեանց իմոց. յիշատակ ինձ և ծնողաց իմոց . . .» [3]:

Շարական և Շարակնոց իբրև գրքի անուն, թերևս լինեն հին կոչում սակայն մեր ձեռքում տարաբաղատարար չունինք սրանից աւելի հին ապացոյց: Բայց և այնպէս իբրև Գրքի հին անուն, ծանօթութեամբ մեր ցոյց տուած Շարականից աւելի հնագոյն Շարականների մէջ կարդում ենք Հնութեան կրնշում կրող այս անուններս,—«Սաղմոսդպի Եր-

---

1) Հայկազեան բառարան, ՇԱՐ—դասաւորութիւն որևէ իրաց. շար, շարոց, կարգ:

1) Մատ. Դեր. Շնոր. Վենետ. 276: 2) Պատ. Վարդ. Խոր. 1861 Մոսկ 96 3) Մայր Ընթացիս: 3) Ձեռ. Շար. № 1586—ժե. թղ 285 բ. 282 ա:

գոյս. աստուածաշունչ Տառիս. եղանակաւոր Տառիս»[1], որից կհետևի, թէ սոքա են եղել մեր Շարականի հին ու սեպհական անուննները, և այդ «աստուածաշունչ երգերն ու Տառերը» եկեղեցական միս հոդեշունչ երգերից ու Տառերից՝ որպիսիքն են, Տաղարան, Գանձարան, մի վսեմ անունով յորջորջելու համար դրուեց նոցա վերայ՝ անշուշտ յիշեալ Մանկունքների վերնագրերից փոխ առած ՇԱՐԱԿԱՆ և ՇԱՐԱԿՆՈՑ, որոց կազմի տակ այդ դարև շարէշար շարք են ընկած և նոքա. բայց թէ ո՛ւմ ձեռքով դրուեց այդ անունը, արդեօք Իսահատուն Շիրակացո՞ւ, Հանձարեղ Գեւտադարձի՞, շնորհալի Ներսէսի՞, տաղանդաւոր Բարձրաբերդցո՞ւ, այդ անդիտելի է մեզ:

Շարական բառի մասին աւարտելով մեր ասելիքները, ի գիտութիւն ընթերցողին հարկ ենք համարում հաղորդել նաև թէ ուրիշները ինչ կարծիքներ են յայտնել իրենց ժամանակին այդ բառի մասին, որ ազգի բառ են համարել նրան, և ինչ են մեկնել:

Վերևում մեր յառաջ բերած այն պատշաճաւոր պատճառները, թէ բառս շարական իւր սկիզբն որ տեղից է առել, և իրրև վերնագիր՝ որ տեսակ շարականների վերայ է գործ դրուել, ինչ առիթով, և ինչ մտքով, այս մի շարք հետազօտութիւնները՝ գիտնական Հ. Գաբրիէլ Ալեռիքեան և պ. Մկրտիչ Իմին առանց ի նկատի ունենալու և յառաջ բերելու իրենց «Շարական» անունով պատուական գրքերի մէջ, ուստի և երկուքն էլ վերջնելով միմիայն անունս Շարական, սրանցից առաջինը —Հայր Ալեռիքեան, Շարական բառը մեր նման բացատրելից յետոյ, գնում է նրա կողքին և իւր այս ենթադրութիւնը, «Ե՛ կամ յերրականէն առեալ ձէռ կամ ձէռն, որ առ նոսա էրգ նշանակէ»[2]: Իսկ պ. Մ. Իմին այսպէս է մեկնում «Այդ բառի արմատն է «ձէ» — երգ. այդ բառը սեմական ծագումն ունի և հայոց լեզուի մէջ երևում է XII դարում»[1], որից դէմ ահաւասիկ սոքա են մեր ասելիքները:

ա. Շարական, մեր լեզուի մէջ չէ նշանակում երգ, որ կարիք լինէր մեկնել նրան ձէր և ձէռ բառերով, այլ նա ցոյց բառից ծագած՝ երգերի դասաւորութեան և գրքի անուն է, ինչպես տեսանք իւր տեղում. ուստի յօժարութեամբ կընդունէի երկու յարգելի գիտնականներիս յայտնած կարծիքները, եթէ միայն մեր լեզուի մէջ չար բառը երգ նշանակէր:

բ. Մեր եկեղեցասէր նախնիք ըստ հարկին երբ եկեղեցական ինչ ինչ անօթների, հանդերձների, գրքերի և երգերի բազմատար անուններ փոխ են առել օտար ազգերից և մուծել մեր եկեղեցական գրքերի մէջ, նոքա նոյնն ևս գրել և թողել են անփոփոխ, առանց ազգասիրաբար հայացնելու նրանց մի կամ բազմաթիւ հայ բառերով. զո. սաղմոս, գուբդայ, կանոն, մեղեդի, մեսկդի, ալէլուիա, պռօսխուսմէ, եմիփորոն, փիլոն, ևլն ևլն. ուստի եթէ Շարականն ևս ծագած է եբրայական և սեմական ձէր և ձէռ բառերից, պէտք էր որ ըստ օրինի գրուէր ձէրական և ձէռական, անփոփոխ պահելով իրենց ձեր և ձիր արմատը, և ոչ Շարական: Սակայն թերևս առարկող լինի, որ գուցէ ժամանակին գրուել է ձէրական և ձէռական և ժամանակի անհմուտ գրիչների ձեռքով աղաւաղուելով՝ հետևապէս սխալ է հասել մեզ և նրա գրութեան ձևը: Սակայն պէտք է ի նկատի ունենալ, որ եկեղեցական գրքերի մէջ սուրբ Աստուածանից յետոյ, գրեթէ ոչ մի գրիչ այլևայլ գրիչների ձեռքով այնչափ ապրած արագ չէ գրուել և բազմացել մեր ազգի մէջ, որչափ Շարական գիրքը: Հէնց միայն սուրբ Աթոռոս Մատենադարանը ունի 73 օրինակ գանազան դարերում գրուած Շարականն, բայց և այնպէս նոցա մէջ, նոցա հարուստ յիշատակարանների մէջ ձէրական և ձէռական ոչ մի գրիչ չէ գրել, այլ Շարական:

գ. Ի՞նչ հարկ կայ ձէր և ձէռ բառերը կապել Շարական անուան հետ և երգ թարգմանել, մինչդեռ երգ և երգարան բառերը արդէն կան

1) 2ետ. Ձար. № 1572—ա. Թղ. 306ա. № 1573—բ Թղ. 337ա. 2) Բաց. Ձար. յառաջ'' ժ.

1) Шараканъ—Москва. 1879. յառաջ'' 6.

մեր լեզուի մէջ, և ծանօթ լինելով Շարական գրող մատենագրներին և Շարական արտագրող գրիչներին, այնպէս էլ գործ են դրել:

Ը· Սեմական ազգերին իրաւամբ պատկանող չէր և չէր բառերը ոչ թէ նշանակում են հայկական տաղաչափութեամբ գրուած հ֊ ֆե՞ր էլ ֆ որպիսիքն են մեր Շարականները [1], այլ նոքա նշանակում են կանոնաւոր չափով ու ոտով գրուած գրական և աշխարհիկ այլ և այլ խառն բանաստեղծութիւնները, որպիսիքն ունի մեծահանճար մեր Գամառ – Քաթիպան:

Չէր և չէր թէ արդարև այդպիսի երգեր են նշանակում և ամենևին չեն նշանակում հ֊ ֆե՞ր էրֆ, ի դիտութիւն ընթերցողին յառաջ ենք բերում Եօթնեորդ դարում Գլակայ վանքի առաջնորդ Յոհան Մամիկոնէից եպիսկոպոսի ձեռքով գրուած մի հատուած, ուր Նա նկարագրելով Վահան կամսերականի և Վարազ Իշխանի ընդդէմ պարսից դրած ա֊ րիւնահեղ ճակատամարտը և պարսից սոսկա֊ լի պարտութիւնը, վերջացնում է իւր գեղեցիկ պատմութիւնը այսպէս, «իսկ Սմբատ հրամայեաց զդիակունսն կուտել ի վերայ իրերաց ի բլուրն, և·· կոչեցաւ անդրին այն Վարազ֊ բլուր·· և իբրև մտին ի գիւղն (կենաց վայրք), ընդ առաջ եղեն նոցա պարաւորքն, և·· չէր հանեալ ասէին» [2]:

«կերան զաղանք զմարմինս դիակացն Վարա֊ զայ, և գերացան: կուզ կերեալ, ուռաւ որ֊ պէս զարջ· և աղուէս հպարտ եղև քան զա֊ ռիւծ: Գայր, քանզի շատակեր էր, պայթեաց· և արջ, քանզի զոր ուտէն՝ չմնայ առ ինքն, ի սովոյ մեռաւ: Անգղք՝ քանզի ագահք կին, նստան և այլ ոչ կարացին վերանալ· մկունք՝ քանզի շատ կրեցին ի ծակն, ոտքն մաշե֊ ցան» [3]:

Ահաւասիկ չէր և չէր այս և այսպիսի զու֊ արճալի և մերթ առասպելահաւան երգեր և բանաստեղծութիւններ են նշանակում և ոչ շարականներ, ինչպէս և մենք ստուգեցինք ե֊ բևանում ապրող Եբրայեցի և պարսիկ հմուտ ռաբիներից, բաւական չհամարելով Հայր Յա֊ կովբոս Պօղաճեանի մեր առաջ դրած այս գեղեցիկ բացատրութիւնը·

«ՇԻՐ, ա (արաբերէն)· եզ· է՛շար· յդ· տաղ· չափածոյ, չափով բանք· նուագ· բանաստեղծու֊ թիւն· 2· գիտութիւն· ծանօթութիւն» [1]:

Չէր և չէր բառերի մասին բաւական համա֊ րելով այսչափս, ի դիտութիւն ընթերցողին կարդում ենք այստեղ յիշեալ ռաբիների բե֊ րանից քաղած սեմական և այլ ազգերին պատկանող երգիչների և երգերի բաժանմունք֊ ները իրենց հին և նոր անուններով և զպալի օրինակներով, քաղելով այդ օրինակները եր֊ ջանկայիշատակ Խաչատուր Աբովեանի՝ 1858 թուին Տփխիսում տպուած պատուական «Վէրք Հայաստանից», 1868 թուին Պետերբուրգ տպուած «Քնար Հայկականից», և Ղափանցու երգարանից:

Ա· Շիր—պէ· Շէր—պէ» 2 տողից բաղկա֊ ցած նոյնայանգ ոտանաւոր·—

«Պուլպուլն է հագեր ի յոտքն կօշիկ,
Ձվալէ կու փընտրէ սիրով անուշիկ» [2]:

Շիր՝ իբրև նախաբան դրւում է ևս երգի ճակատին, նշանակելով թէ այն երգը որի՞ վերայ է յօրինուած, և այս նախաբանը կոչ֊ ւում է Շէր·—

«Սակաւուկ ինչ խրատ
Առ անձն իւր ապիրատ»:

Բ· Ղազէլ, Ղազալ—պէ·· 5-ից մինչև 18 տող՝ Շէրի նախաբանի հետ լծորդուած նոյնայանգ «պառնաս֊պէը», որի բ և պ տողերը վերջանում են չէրի նման: Դնենք իւր Ղազէլի հետ յիշեալ նախաբանը·—

«Սակաւուկ ինչ խրատ
Առ անձն իւր ապիրատ»:

«Ձիր համ ի բանս երկարադոյնս
Թէ լաւ թէ վատ քիչն անոյշ է·
Սիրելի է միակ որդին՝
Թէև վատ՝ քիչն անոյշ է» [3]:

Գ· Մանուկի—պէ·· բազմատող և նոյնա֊ յանգ ոտանաւոր:

1) Տես «Մշակականք» յառաջաբան:
2) Շէր Հանեալ, ըստ ռամկաց Խաղ հանել խաղ կապել:
3) Պատ Տարօնոյ, 1832· Վս· գլ· Գ· 42·

1) Համառօտ բառգիրք ի Տաճ· ի Հայ Վեննա· 1841· 2) Քնար֊Հայկ· 246· 3) Ղափանցի 158·

Դ· Գասիդէ—արբ· Գասիդայ—պր· 20-ից մինչև 200 տող ականաւոր մարդոց վերայ յօրինած նոյնայանգ դրուագ։

Ե· Մխիթարեան—արբ· Խանէնտէ կամ Խանանդայ—պր· ականջալուր երգեր երգող և նուագող երաժիշտ։

Զ· Ազկ, Ազդ, Ազուդ—պ· ք· արբ· 4 տողից բաղկացած նոյնայանգ՝ սիրահարական երգեր գրող, երգող և նուագող երաժիշտ։

Է· Ֆիզան կամ Ֆզան—պր· բազմատող, նոյնայանգ ողբերգական երգեր գրող գուսան· —

«Մհաղլամի սուքը»

«Ազքս խաւարի, լեզուս կարկամի,
Ոտներս կոտրվէր, ախ Ջանս գուրս գար,
Որ սկի նաչարս ձեզ մօտ չգայի,
Ո· ձեզ չտայի էս դառը խաբար» [1]։

Ը· Մկրտա, Ա'զա—արբ· Մաբսիա—պ· Մեռելի վերայ՝ բազմատող, նոյնայանգ գովասանական երգեր շարադրող գուսան· —

«Ազասի Ջան գլխիդ գուրբան,
Դու ես մեր թագն ու պարծանքը,
Թագն էլ գնաց, թվանքն էլ,
Տունս էլ քանդվեց, պուճախս էլ» [2]։

Թ· Սէնա—արբ· Սէյնայան—պ· Պահվածական նախամարդպարէների վերայ յօրինած բազմատող և նոյնայանգ երգը, որոց տօնի կատարման ժամանակ, կատարողները աջ ու ձախ բարախուսմեն իրենց կրծքին ըստ նուագածութեան Ֆիզան գուսանաց (ծնծղայով և թմբկով)·—

«Հարայ մադաթ՝ վայ, Թուր խփի սրտիս,
Աման Ջաթմայ Ջան, քո գլխիդ գուրբան·
Հասան, Հիւսէյն վայ, վայ իմ արևիս,
Հասան, Հիւսէյն վայ, վայ, վայ, վայ, ախ Ջան» [3]։

Ժ· Իլահի—արբ· Հոգևոր երգ։ Եւ ոչ շեր և շիր, ինչպէս յիշեալ գիտնականներն են ասում։

ՍԱՀԱԿ ՎԱՐԴ· ԵՄԱՑԻՆՆ·

---

1) Վէրք Հայ· 104· 2) Նոյն՝ 71· 3) Նոյն՝ 105·

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ·

Ա՛ամութիւնը գրեթէ լռում է, ոչինչ չէ հաղորդում Հայոց եկեղեցական հին եղանակների, ինչպէս և խազերի մասին։

Աւանդութիւնը Հայոց եկեղեցական հին եղանակների գիւտը կամ կարգաւորութիւնը, որ ամենայն հաւանականութեամբ գրերի գիւտի շրջանի արդիւնքն է, վերագրում է Ս· Սահակին· իսկ մինչև գրերի գիւտը Հայոց եկեղեցիներում երգեցողութիւնը սազմոսերգութիւն էր։ Ժամանակ անցնելով սազմոսերգութեանը կից զարգացան Շարականի եղանակները։

Արդեօք սազմոսերգութիւնն ինչպիսի եղանակներով էր երգուում, յայտնի չէ· հաւանականաբար ժողովրդական հին եղանակներով։

Ե· դարում գրերի գիւտը, Ս· Գրքի թարգմանութիւնը հոգևոր երգեր յառաջ բերին· հետզհետէ զարգացաւ եկեղեցական պաշտամունքն ու ժամերգութիւնը· Հանդէս եկան մի շարք երգիչներ, յօրինեցին շարականներ, ճառեր, ներբողներ, եկեղեցական տէրունական և սրբոց տօների նշանակութիւնը ժողովրդին բացատրելու նպատակով։

Այդ իսկ շարականները գլխաւոր շարժառիթ եղան Ութն ձայն և երկու ստեղի եղանակների յառաջ գալուն, ըստ Յայտնութեան Ս· Սահակի ձեռքով· այսպէս սազմոսերգութիւնը տեղի տուեց շարականի եղանակներին։

Շարականի եղանակների Ութն ձայնի բաժանումները ծագել է Ութն կանոն սաղմոսներից։

Շարականի եղանակներից յետոյ կամաց կամաց հանդէս եկան Տպերին, Գանձերի, Աւետիսների և այլ հոգևոր երգերի տեսակներ. հանդիսաւոր ժամերգութեան պահանջից։

Սոքա ևս ներբողներ են, միայն ժողովուրդն էր երգում։ սոքա ժամանակի ընթացքում այնքան բազմացան և ճիւղաւորուեցան, որ իւրաքանչիւր եկեղեցական ոճն յատուկ տպին ունէր. սոցանից առանձին առանձին ժողովածու կազմուեցաւ, Տպարան, Գանձարան, Երգարան անուններով։ Սոցա սկզբնաւորութիւնը պէտք է որոնենք նոն իսկ ե. դարում, որովհետև աւանդութեամբ մեր ձեռքն են հասել տպեր, մեկնիչներ, ծննդեան աւետիսներ Մ. Խորենացու անուներով։ այս կարելի է երկու կերպ բացատրել. նախ՝ եթէ նոքա նորանն ևս չլինէին, քանի որ լեզուի ոճն ապաւապաւած է դարերի ընթացքում, այնուամենայնիւ նորան ընծայելն իսկ ապացոյց է ն. դարից սկիզբն առնելուն կասկած չէ, պէտք է ընդունենք, որ ամէն մի նոր բան, գրերի գիւտից և Ս. Գրքի թարգմանութիւնից յետոյ, ժողովուրդը վերագրում էր ն. դարու Ս. Հայրերին։

ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՐԻ ՁԵՒՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Սոցա արտաքին կազմութիւնն արդէն վր կայում է յատուկ երգելու համար յօրինուած լինելը. տողերը կարճ, տները երկու, երեր կամ չորս տողանի, չափածոյ են. բառերը մեծ մասով միավանկ և երկվանկ են. բառախաղութիւնը, հնդիւտութիւնը, զուգահեռականութիւնը մի ընդհանուր ներդաշնակութիւն են ներկայացնում սոցա մէջ. և այս ձևաւորութիւնը գործ է դրուած եղանակը լոկ խաղալն կատարելու նպատակով։

Տպեր՝ սոցա բովանդակութիւնը պատկերացնում է պարզ կամ այլաբանօրէն Քրիստոսի տնօրէնութիւններն և սրբերի կեանքի նշանաւոր և ազդեցիկ րոպէն։

ՏԱՂ ՅԱՐՈՒԹԵԱՆ։

Ծանր. Բկ.



(Երգեց Արժ. Գէորգ Վարդ Ոշաունի. Ձայնագրեց Սողոմոն Աարկաւագ)։

Ջամբուրս իմ քակիլ կամի
Գերելոցն առնել գերեզարձ,
Գերեացն երանի ասեմ,
Որ եկեն ի յառն Ադիւծուն։
Ի յառն Ադիւծուն եղեն,
Աղբ չունին ակն տանջելոյ։
Ակն տանջելոյ չունին,
Ակն ունին անանց պսակին։
Պսակ բոլորեալ առնուն,
Յադիւծէն, յանմահ Արքայէն։
Փառս փրկողին տացուք,
Որ վրկեաց զգերեալսն ի բանդէն։

Գանձեր՝ սոքա արտայայտում են աշխարհի համար մտքեր. ինչ դարի վերաբերում և ովնասանդ. ինչ դարում գանձերը մեռելների վերայ էին երգում, նոցա բերանից իսպառ վանելով զղջումն և աշխարհի ունայնութիւնը։ Գանձերի և Տպերի զանազանութիւնն այն է, որ առաջիններն իսկապէս ճառեր են, արտաքին ձևը միայն՝ ոտանաւորական։

Աւետիսներ՝ սոցա նիւթն առնուած է Ս. Աւետարանից՝ հրեշտակների հովիւներին Մանուկ Յիսուսի ծնունդն աւետելու րոպէն։

Աշեաիմները վերագրում են Մ. Խորենացուն, բայց սոսկ խիստ փոխուած է ժողովրդի մէջ բերնէ բերան անցնելով։ Այժմ էս կան տասնեակ, անհամար Աշեաիմներ, որոնք զանազան տեղեր, այլ կերպ և այլ եղանակով են երգուում բայց ընդհանրապէս խօսքերի բովանդակութիւնը միևնոյն է, զանազանութիւնը քարբառի մէջ է. իսկ եղանակները կամ դկ. որպէս «Խոր Վիրապ մեծ» շարականը, կամ ԱՋ գալաձաձք՝ ԴՋ-ի և Դկ-ի խառնուրդից բաղկացած։ Մէջ ենք բերում Ա շաւնեաց Պօղոսիս գիւղի Աշեաիսը, որ ձայնագրեցինք Արժ. Դէորգ վարդապետի եղբայր Յարութիւնից, որ նոյն գիւղի բնակիչ է։

Ջաիաւոր - Միջակ. Դկ. $^2/_4$



(Այս եղանակով երգուում են միւս բոլոր անները, միայն յէ վերջին տուրը վերջանում է փոխանակ ո-ի ու)։

Ա՛յսօր ծնունդք ի Մարիամայ,
Մարիամ գնաց դաւն ի յէրին,
Գամակ էտու խաչաւետին,
Շնչից էրի Յիսուս որդին,
Յիսուս որդին մկրտեցին,
Բուրդ խանձարուս փաթթեցին։
Էնէկ ա քեզ տուրը Յովհաննէս,
Գեզ Քրիստոսին քաւար սրին,
Էնէկ ա քեզ գետ Յորդանէս,
Քրիստոս մէջ քեզ մկրտեցին,
Էնէկ ա քեզ բուրդ խանձարուր,
Քրիստոս մէջ քեզ փաթթեցին։

Էս տան շինած աշնան շինած,
Էս տան քարեր մարմար բերած,
Թոնէր ի նի (մէջ) խընձ (քանց) եկեղցի,
Հարսներ ի նի խընձ եղբընիք,
Աշեղը ձեռ վառնջ մանուշակ.
Կախեն (բաժակ) զձեռ նռան գինին։
Մամիկ, մամիկ, ես քե ծառայ,
Սօղեր ոտներ կճուղայ,
Կոքեով (ընկոյզ) էրի կխաիտայ,
Ջեր տըի անուն ինչ ա. (Ներսէս)
Ներսէս նստի ծառի տակին,
Բրչամ (ծամ) թալե ծառի ճղին,
Քանի ծառին ճոզ կայ,
Ջեր Ներսէսին շատ արև կայ։

ՇԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՋԵՒՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ.

Շարականները, գրիթ. բազրը, երէց, կամ երէց անգամ երէց անից են կազմուած. բոլոր անները մի և նոյն եղանակով են երգուում (երեքական աներից բաղկացած լի Թլը Ս. Ներսիսեան նշանակ է, իսկ ի և նոյն եղանակով երգելը՝ երեք Անձն, Մի Աստուած ծուխին լինելուն)։ Շարականների մեծագոյն մասն արձակ, փոքրագոյնը տաղաչափական բանաստեղծութիւն է. բանաստեղծութեամբ աշակուած է աւելի մխաքը, քան պատկերասորութիւնը. տաղաչափութեան երկու ձևն էս կայ՝ շեշտական և վանկական։ Օրինակ շեշտական տաղաչափութեամբ է գրուած Մ. Խորենացու «Կանոն Ծննդեան և Աստուածայտնութեան Տրագալուցի» առաջին երեք տուները։

Ուրախացիր Սրբուհի, Գաբրիէլի աշետեօք.
Որ քարոզեացն զգալուստ Արքային Տեառն ի յերկնից։
Ողջոյն ընդ քեզ Մարիամ ի քեզ Ս. Հոգին եկեաց է,
Եւ զօրութիւն Բարձրելոյն ի վերայ քո հովանաստ։
Որ ծնանելոցն է ի քէն Իսրայէլի առաջնորդ,
Եւ ընդ Հանուր քարոզի Աստուած հզօր Անմահ Բանն։

Նոյն տաղաչափութեամբ գրուած է «Խոր Վիրապ մեծ և սքանչելի» շարականը։ Աբրահամիւր տան մէջ ութն շեշտ կայ, բայց վանկերի քանակը 14 կամ 16 ն է։

Վանկական տաղաչափութեամբ գրուած է, օրինակի համար, Ներսէս Շնորհալու Հոգե-

գալստեան Բ. աւուր կանոնը՝ «Նոյն և նման»։

Նոյն և նման Հօր և Որդւոյ,
Հոգիդ անեղ և համագոյ,
Բը[illegible]ւմըն Հօր անքննաբար,
Առօղ յԱրդւոյ անճառաբար,
Ի վերնատունն այսօր իջեր,
ԶՀոգիդ շնորհաց քոց արբուցեր,
Արբա և մեզ ողորմութեամբ,
Ի բաժակէդ իմաստութեան։ և այլն։

Շարականների մեծագոյն մասը, ինչպես յիշեցինք, արձակ բանաստեղծութիւն են. բայց նկատելի է, որ սոցա մէջից կան այնպիսիները, որոնք թէպէտ արձակ, բայց տուն տուն չհամաձայնում են։ Օրինակ՝

Ակ.
ա. Ծով կենցաղոյս հանապազ զիս ալեկոծէ։
բ. Մըրըրկեալ ալիք թշնամին ինձ յարուցանէ։
գ. Նաւապետ բարի լեր անձին իմոյ ապաւէն։

Շարականների բովանդակութիւնը շատ չարուսա է. արտայայտում են կրօնական զգացմունք։ Բովանդակութեան գլխաւոր մասերն ա. Հաւատի էական մասը. բ. Քրիստոսի անօրինութիւնները. գ. եկեղեցուս խորհուրդները. դ. Ս. Գրքից կտորներ, որոնք լուսաբանում են Քրիստոսի անօրէնութեանց որ և է գաղափարը. և ե. սրբերը, որոնք նպաստեցին քրիստոնէական ճշմարիտ լուսոյ տարածմանն։ Այսպիսի բազմակողմանի բովանդակութիւն ունեցող բանաստեղծական մի ս. Գիրք, անշուշտ պէտք է, որ ունենար և բազմապիսի եղանակ, չհամապատասխան կրօնական զգացմունքին։

ՇԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՐԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ։

Շարականի եղանակները տասն են՝ ութն ձայն և երկու ստեղի. այն ինչ հոգևոր երգերը, Տաղերը, Գանձերը, Աւետիսները բազմեղանակ են, և այնքան բազմատեսակ, որ կարիք է զգացուել դոցա միմեանցից[illegible]ելու համար զատ զատ անուն տալ։

Շարականի գլխաւոր եղանակների և սոցա ստորաբաժանումների ընդհանուր թիւն է քառասուն. իսկ միւս հոգևոր երգերինը հարիւր յիսուն երկու։

Այս հանգամանքը բացատրուում է այսպէս. Տաղերի, Գանձերի և միւս հոգևոր երգերի եղանակները զանազան դարերում, այլ և այլ ազգաց ճաշակին նայելով, փոփոխուել և ամել են. որովհետև սոցա գործածութիւնը սահմանական չէ եղած, իսկ Շարականի եղանակները պարտադիր և գործածութեան մէջ սահմանակից լինելով չեն փոխուել ըստ էութեան. թէպէտ ժԲ դարից յետոյ կ. Պոլսոյ Հարուստ և դէպի եկեղեցական եղանակները սէր ունեցող ամիրաների առաւտաձեռնութիւնից և հովանաւորութիւնից օգուտ քաղեցին մի քանի սիրացուներ և մրցման ասպարէզ մտան, չկանք թափելով միմեանց գերազանձել կամայական կլկլանքներով և գեղգեղանքներով, որոնք բուսական նպաստեցին եղանակների նախկին պարզութեան խախտման։ Այնուամենայնիւ Շարականի եղանակները ըստ էութեան անփոփոխ հասել են մեզ։ Այս կէսի մասին մի ուրիշ անգամուայ պատեհ ժամանակին կգրենք։

ՄԱՆՐՈՒՍՈՒՄՆ։

Հին երաժիշտները Մանրուսումն ասելով հասկանում էին՝ ուսումն եկեղեցական երգերի, եղանակների և խազերի մասին։

Մանրուսումն շատ մեծ ծաւալ ստացաւ ԺԲ—ԺԼ դարը. մանաւանդ ԺԲ ի վերջին կէս դարին այնքան անհրաժեշտութեան հասաւ, որ ներսէս Շնորհալին իւր ընդհանրականի մէջ քահանայութեան գլխաւոր նախապատրաստութիւններից մէկն էր համարում. Չեկեղեցական գիրս ուղիղ ընթեռնուլ, և պատշաճ ա-ո-մ-ա-ն յայնա-ւոյցն պաշտել չեկեղեցի», և ապա գալ ի ձեռնադրութիւն քահանայութեան։ (Ընդհանրական Ն. Շնորհալւոյ. էջ 59 Ս. Սրուսալէմայ տպագրութիւն)։

Արդեօք կա՞ր առանձին դասագիրք կամ կանոնագիրք իբրև ուղղեցոյց Մանրուսման,

չգիտենք. մեր ձեռքն են հասած և եթէ Հայ նագրած հոգևոր երգերը, որոնց խազերի ըմբռնութեան թափանցելն անհնար է դեռ. դոքա մեզ համար մեռած նշաններ են. նախնիք սոցա բացատրութիւնը զլացել են մեզ աւանդել։

Մանրուսումն լիակատար իմացողներ թերևս թուով շատ քիչ են եղել, որոնք և թագրուած են պահել իրանց գիտութիւնը ճիշդ այնպէս, ինչպէս յիսուն տարի առաջ կ. Պոլսոյ Հայ երաժիշտները՝ նօթահիներ սրդի Հայ իսկական ձայնագրութիւնը, հասի խրնդիր էին դարձրել, եթէ երաժիշտները որոնք կմասպոն կամ ֆկլֆաֆա էին կոչուում այն ժամանակի լեզուով, հրաժարէին, միւս ձայնագրած, բազմաթիւ ձեռագիր կամ տպագրած երգարանների հետ մեր ձեռքը հասած լինէր գոնէ մի քանի օրինակ և ո ձեռնարկ հին խազերի և եղանակների մասին, որոնք Մանրուսման նիւթն են։ Մեր ասս կարդիր հասատում ենք մի յիշատակարան . . . . Զոր (զարուեստս Մանրուսման) ի մանկանց եկեղեցւոյ սակաւք գիտեն։

Իմաստուն կամ փիլիսոփայ բառի բացատրութիւնը գանում էինք Շնորհալու մէջ. Ըստ նմին սոմորութիւն ֆկլֆաֆա, ասէ, ոչ չէրաֆչականաս ասուածոցի կապակչափ էն. այսպէս և Դաւիթ՝ (Պնդոցի) ն՛ւ միայն փիլիսոփայ, այլ յոտոտուածեղէն և յարտարին հրահանգս անթերի և լիակատար էր, նորին աղագաւ կոչի փիլիսոփայ, զպատիւն զեկուցանելով։ (Պատմութիւն Հայոց դպրութեան էջ. 296)։

ՄԱՆՐՈՒՍՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ.

Մանր ուսումն յառաջացաւ, զարգացաւ կիլիկեան վանքերում։ այս գեղարուեստի զարգացման սկզբնագաղը մօտաւորապէս ԺԱ. դարի վերջին կէսն է։ Մանրուսման ականաւոր կենդրոններն էին Արքակաղին, Դրազարկ, Սկևռայ, կարմիր վանք և այլ վանքերը կիլիկիայում։ Մեր գտած մանրուսման եղանակները հարիւր յիսուն երկու տեսակ են. սոքա գտնուում են ձեռագիր, Հայնագրած ժամագրքերի մէջ, որոնք կոչում են խազգիրք հատանականաբար խազերի հնութեան պատճառով, ժամագրքերի մէջ Մեսեդինեներն ու Ըստիդեոիդինները կազմուած են երաժշտական խազերով. ոմանց մէջ գտնուում են Հարցմաբեր և այլ այժմ անգործածելի հոգևոր երգեր։

Մեսեդինների և Ըստիդեոիդինների առաջ՝ լուսանցքում գրուած են այլ և այլ եղանակների անուններ, ըստ Հայի բաժանմունքով, սոցա նըրբութիւնները դոյդ տուող։ Այս եղանակների անուան հետքը կայ Շարականի մէջ ևս ԱՋ ԲՋ և այլն անուններով։ *

Այս եղանակների մէջ կան՝ տեղերի, երաժիտների, կամ սոցա մականուններու, տոհմերի, երգի սկզբնատառի, տէրտունական տօներին, նուագարանների, Հանրի, հինգանիների, գործիքների, եղանակի բնաւորութիւնը պատկերացնող, բոլորի և մի քանի անհասկանալի բառերի անուններ։

Եղանակների տեսակների զատ զատ անուանակոչութիւնը շատ վաղ ժամանակներից է յայտնի. մի սոմորութիւն, որ յատուկ է եղել միայն արևելեան ազգերին՝ Հայերին, Պարսիկներին, Քրդերին, Արաբներին, Տաճիկներին և այլն, որոնք մինչ այժմ և ս գործածում են բոլ Հայերից. մեր եղանակների լոկ անուններն ու անյայտ խազերն են մնացել ձեռագրերի մէջ։ Միայն դոցա հիմնական եղանակները պահուել են Շարականների մէջ՝ Ըստին Հայն։

Պարսկական, Արաբական և Տաճկական եղանակները գրեթէ նոյն անուններով են յայտնի. մէջ ենք բերում համեմատութեամբ Ըստին Հայնի, նոցա գլխաւոր եղանակների անուններ, ահռի ընդարձակը պատեհ ժամանակին թողնելով։

ԱՋ. Առաջին Հայն — Հէֆթիւկեահ.
ԱԿ. Առաջին կոչմն — Սիկեահ.
ԲՋ. Երկրորդ Հայն — Հիւսէյնի.
ԲԿ. Առաջ կոչմն — Ռաճէմ.
ԳՋ. Երկրորդ Հայն — Հիճազ.
ԳԿ. Վառ Հայն — Սապահ.

Դ.Ջ. Ջորրորդ ձայն—նէ վա կամ Խալհան
Դկ. վերջ ձայն — իշշաք.

Ութն ձայն և երկու ստեղի եղանակներն ևս ունեցել են Նոյնպիսի անուանակոչութիւն, որպէս գտնում ենք Յայտաւուրքի մէջ, որ Ս. Սահակին է վերագրում տասն ձայնի կարգաւորութիւնը։ «Ըստ թուոյ տասն արարածոց ի չորից ձայնից տասն բարդեցաւ. և չորս ձայնք ի չորս տարերցս ունին զգայութիւնն. որպէս ա. ձայնն ի հողոյն, և ը-ն ի ջրոյն, գ-ն ի յօդոյն, դ-ն ի հրոյն. և ի ձայնիցն՝ բաժանեաց չորս կողմ. վաւ և վերջ երկու ստեղին։ Որք ունին և այլ յատկութիւն. զի ա ձայնն ի հիւանդականէն է. ը-ն ի դարբնէն. գ-ն ի գեռոց. դ յատորեաց. է յերկաթոյ. զ ի ծուլոյ ծիանաց. է յանտանոց. ը ի գազանաց. ը և թ ի հաւուց։ (Շնորհալի և Պարագայ իւր. Է. Ղ. Ալիշանի. տիպ վենետի էջ 88)։

Յետոյ ասէլսդնում է Է. Ղ. Ալիշանը, թէ Պռոխոռնոս անունով մի երաժիշտ քսան և վեց եղանակ է յօրինել բնական իրերի և կենդանիների ձայնից առնելով։

Պատահարար մեր ձեռքն անցաւ մի ձեռագիր, որի մէջ տարել էր մի անյայտ գրչի գործից մի գլուխ բան «Զատագս ձայնից թէ ուսոի գուան» վերտառութեամբ, բոլորովին անկախ գրքի բուն նիւթից։

Ա յս կտորը բաւական շահաւէտ տեղեկութիւններ է հայտորդում, որոնցից մէկն է և ոմն Պռոխոռնոս փիլիսոփայ՝ երաժշտի մասին։ Մեր կարծիքով, Է. Ղ. Ալիշանի յիշած Պռոխոռնոս երաժիշտը նոյն ինքն այս անձն է. բայց ոչ թէ յօրինել է յիշեալ քսան և վեց եղանակը, այլ թարգմանել է Արաբերի Բարսղի գրութիւնից. և որ եղանակների թիւն է քսան և չորս։ Այդ կտորը նոյնութեամբ արտագրում ենք։

(Կը շարունակուի)։

ՍՈՂՈՄՈՆ Ա. Ե. ՍՈՂՈՄՈՆԵԱՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔՂՂՈՒԹԻՒՆ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԳԻՍ։

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 449 յանուն Թեմական տեսչի Արցախու բար. Պետրոս քահանայի Տէր Յովհաննիսեանց, որով արտօնէ վերաձել զմիգասեան Օրիորդական դպրոցն Հատրութ գեղջ յերկգասեան ուսումնարան ըստ խնդրանաց ժողովրդեան տեղւոյն։ 6 Ապրիլի

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 475, որով օրհնէ զայրի Տիկին Կէկէն Թանդոյեան որ ի Տփղիս, սակս նուիրելոյն նորա կալուածս արդիւնաբերս 2000 րուբլեայ ի տարեկ, ի մշանջենաւոր սեպհականութիւն Ս. Աստուածածնին Կեդեցւոյն Կուկիոյ, ի պետս ուսումնարանին կառուցելոյ ի հանգուցեալ առնէ Տիկնոջն Թանդոյեան։ 13 Ապրիլ։

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 508 առ Մինօրն, որով պատուիրէ կարգադրել յաղագս տալոյ Աւետիս Տէր Գաբրիէլեանի կարողագիր իրեւ կառավարչի կալուածոց Մայր Աթոռոյ, ի կատարումն դատական վճռոյ դրամական պահանջանաց Ս. Աթոռոյս և այլև այլ յանձնաբարութեանց։ 13 Ապրիլի։

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 542 առ ժողովրդականս Սանահնի և շրջակայ դիւղօրէից, որով Ծանուցանէ զկարգուսն բար. Վարդան վարդապետի ի վանահայրութիւն Սանահնի վանուց և տեղի բար. Գեղամ վարդապետի, և պատուիրէ ժողովրդեանն սատարել վանահօրն ի բարոյականին և ի նիւթականին, սակս կառուցման ուսումնարանի իրիք ի վանս Սանահնի ի կրթութիւն և ի դաստիարակութիւն մանկանց կողմանցն այնոցիկ։ 22 Ապրիլի։

Կոնդակ Վեհափառ Հայրապետի աղջիս Համարաւ 564, որով հաստատէ ի պաշտաման Հոգաբարձութեան Թեմական դպրանոցին Երևանայ զԱռաքելն Ափրիկեան, զՅարութիւնն Սարուխանբէգեան, զբժիշկ Յովհաննէսն Յովհաննիսեան, զՋաքարիայն Գէորգեան, զԳրիգորն Ամիրեան, զՅովհաննէսն Մելիք Ադամալեան, որպէս և զանձնափոխանորդսն սոցա՝ զԳրիգորն Տէր Խաչատրեան, զԳէորգն Անտոնեան, զԼևոնն Եղիազարեան և զՅովհաննէսն Մելիքեան: 28 Ապրիլի.

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Համարաւ 607 առ Սինօդն, որով պատուիրէ ազատ համարել ի մեղադրանաց զԳարեգին վարդապետն Սաթունեան և զՄարտիրոս աւագ քահանայն Տէր Պօղոսեան, և զգործն վասն սոցա որ ի Սինօդի դադարեցուցանելով աւարտել իսպառ, քանզի ըստ վերահասութեան բարձր. Քննչին ոչ գոյ անհաւատարմութիւն ի գործս նոցա: 3 Մայիսի.

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Համարաւ 610, որով պատուիրէ Սինօդին թողուլ վանուցն Տաթևու զմնայեալ աթոռահաս եկամուտն ամին անցելոյ և զնոյնպիսի եկամուտ ներկայ ամի, յաւարտել զթերի մնացեալ մասըն զանգակատան և ի նախապատրաստութիւն պիտոյից նորոգութեան սենեկաց և բանալոյ ընծայարան՝ ի կրթութիւն մանկանց շրջակայից: 4 Մայիսի.

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Համարաւ 641, առ Աբրահամ Վարդապետ Ռշտունի՝ միաբան վանուցն Խորվիրապու, որով կալգէ զնա վանահայր Նախավկայի վանուց որ ի Դաբաշամբ: 9 Մայիսի.

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Համարաւ 645 առ առաջնորդն Պարսկաստանի և Հընդկաստանի Եսայի եպիսկոպոս, որով յորդորէ լինիլ քաջալերուն դէտ հօտին իւրոյ, հաստատուն պահել զնոսա յաղդութեան և յուղղափառ դաւանութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ, առաջնորդել հոգւով ճշմարտութեան և բարութեան, և ոչ բնաւին տեղի տալ վարդովմանց ժողովրդեանն և բողոքանաց: 9 Մայ.

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Համարաւ 727 առ Յակոբ քահանայ Ամատունի որ յԱլէքսանդրապօլ, որով շնորհէ նմա զիրաւունս կրելոյ ոսկեզօծ խաչ, ըստ խնդրանաց և միջնորդութեան Սինօդի Ս. Էջմիածնի: 20 Մայիս.

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Համարաւ 781 առ վարչութիւն Հայուհեաց խնամատար ընկերութեան Նոր Նախիջևանի, որով օրհնէ զանգամուհիս և յայտնէ զգոհունակութիւն սրտի սակս յողնաջան աշխատութեանց նոցա և առաքման 341 րուբլեաց, ի գործածութիւն և ի պետս ուսման աղքատիկ աշակերտուհեաց: 27 Մայիսի.

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Համարաւ 797 առ Տիգրան Մ. Ափրիկեան և եղբարս, որով յայտնէ նոցա զիւրն գոհունակութիւն սակս նուիրելոյ դպրոցի Կարբի գեղջ վեց հարիւր րուբլի ամ ըստ ամէ, ի յաւելուածացուցանել ի յիշատակ հօրն իւրեանց Մկրտչի՝ ի ծննդավայրի անդ մանկութեան ի Կարբի:

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Համարաւ 798 առ Փոխ. Թեմական Երևանայ բարձրապատիւ կիւրեղ վարդապետ, որով յայտնէ՝ թէ ըստ միջնորդութեանն նորա, շնորհէ իրաւունս բանալոյ զդպրոց ի Կարբի, հիմնեալ բարերարութեամբ Մեծ. Ափրիկեան եղբարց և պատուիրէ առնել ընտրութիւն հոգաբարձուաց: 28 Մայիսի.

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Համարաւ 799 առ Գրիգոր քահանայ Սաղաթելեան Արտաշատու, որով շնորհէ նմա զիրաւունս կրելոյ ոսկեզօծ խաչ: 30 Մայիսի.

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Համարաւ 859 առ առաջնորդ Վրաստանի և Իմերէթի Գէորգ եպիսկոպոս Սուրէնեան, որով պատուիրէ ձեռնարկել անյապաղ յընտրութիւն նորոց եկեղեցական պատգամաւորաց, ի կատարել զընտրութիւն նորոց հոգաբարձուաց Ներսիսեան դպրանոցի, և անվաւեր համարի զհոգաբարձական ընտրութիւնն 1893 ամի։

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս Համարաւ 869 առ Սինօդն, որով յայտնէ՝ թէ կամի ի հիմանց կառուցանել երկուս հացարանս (փուռ) ընդարձակ խոհանոց և մառան հանդերձ յարակից շինուածովք, և պատուիրէ տալ վանական կառավարութեան ժամանակաւինեալ տօմար և ըստ պահանջանաց նորին դրամս ի դանձարանէ վասն պատրաստութեան քարանց, և այլ կարևոր պիտոյից և նիւթոց շինուածոց և վճարելոյ զվարձս աշխատողաց։ 8 Յունիսի։

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Համարաւ 881 առ Գրիգոր եպիսկոպոս Ազափիրեան, որով կարգէ զնա ի պաշտօն վանահայրութեան վանուց Թովմայի առաքելոյն որ յԱդուլիս, արձակելով զնա ի կառավարչութենէ Թեմին Բեսարաբիոյ և Նոր Նախիջևանի։ 9 Յունիս։

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Համարաւ 899 առ Սինօդն, որով պատուիրէ այժմէն իսկ տնօրինել և յանձնել վանական կառավարութեան ի կռել պայման ընդ ականահատ վարպետս, տալ մաքրել սոցա զՋրանցն և փորել զնոր Ջրհոր, մինչև ի հոսիլ միշտապէս հաստատուն և առատ Ջրոյ ի լցուցանել զպէսպէս միաբանից և բնակչաց գեղջն։ 10 Յունիս։

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Համարաւ 905 առ Բարթուղիմէոս քահանայ Բէկգիւլեան Սաավրապօլի, որով շնորհէ նմա իրաւունս կրելոյ ոսկեզօծ խաչ, ըստ խնդրանաց ժողովրդեանն։ 11 Յունիսի։

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Համարաւ 962 առ Գրիգոր քահանայ Երիցեան Կ. Պոլսեցի, որով շնորհէ նմա խաչ ոսկեզօծ ի նշան գոհունակութեան։ 21 Յունիսի

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Համարաւ 992 առ Գէորգ եպիսկոպոս Սուրէնեան՝ առաջնորդ Վրաստանի և Իմերէթի, որով ծանուցանէ զկարգադումն Գարեգին վարդապետի Սաթունեան ի փոխանորդութիւն վիճակին Գանձակայ, ի տեղի Պօղոս վարդապետի Տէր Մարդարեան՝ որ մնայ վանահայր Հաղարծնի վանուց։ 25 Յունիսի։

ՓԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

6 Յունիսի։ Սինօդը օրագրով մերժեց Բեսարաբիայի կոնսիստորիայի միջնորդութիւնը Ակքիրմանցի Մկրտիչ Տէր Մկրտչեանին վերըստին ընդունել ի սպասաւորութիւն եկեղեցւոյ, որովհետև տեղւոյն ժողովրդեան բազղանաց համեմատ արդէն իսպառ արձակուած էր նոյն պաշտօնից իւր անյարմար լինելուն համար։

—

15 Յունիսի։ Սինօդը Աստրախանի կոնսիստորիայի յայտարարութեան համեմատ վճռեց Արմաւուերցի կարապետ Աւետիսեանցին ենթարկել վեցամսեայ ապաշխարութեան խրիմի Ս. Խաչ վանքում ինքնասպանութեան փորձ անելու համար։

—

22 Յունիսի։ Ալէքսանդրապոլի Հոգևոր կառավարութիւնը խնդրել էր թոյլ տալ շինել տասն և վեց կրպակ Մայր Աթոռի նոր կառուցած շտեմարանի մօտ։ Սինօդը պահանջելով շինութեան նախագիծը և նախահաշիւը և օգտակար համարելով Մայր Աթոռին, հրամայեց։ ուղարկելով մի ժամպատճենեալ տուժար թոյլ տալ կառավարութեանը ձեռնարկել կրպակների շինութեանը, ծախսելով 1847 ր. 48 կ. դրամ, և շինութիւնը աւարտելուց

յետ ծախսի տոմարը մատուցանել Սինօդին զննելու համար։

—

22 Յունիսի. կոնսիստորիայի յայտարարութեան համեմատ Սինօդը թոյլ տուեց Շամախի քաղաքի ժողովրդեան նորոգել Ս. Աստուածածին եկեղեցին արտաքուստ և ինքնուստ որոյ վերայ պիտի ծախսուի 1196 ր. 29 կ. եկեղեցական դրամից և 1500 ր. ժողովրդեան սեպհականութենից։

—

22 Տփխիսի Հայոց կոնսիստորիային քննելով Լագոտաղ գիւղի Խրիստափոր քհնյ. Եղիկեանցի անվայել արարքը, որի մասին բողոքած էին տեղւոյն ժողովուրդը և Տփխիսեցի Աղեքսանդր Դանդուրեանցը, եղրակացնում է ըստ չափու յանցանաց ենթարկել նրան մի ամեայ եկեղեցական ապաշխարութեան և պահանջել նրանից քննչաց ճանապարհածախս 52 ր. 70 կ։ Սինօդը ըստ բարեհաճ կամայ Վեհափառ Հայրապետի հաստատեց կոնսիստորիայի այս եղրակացութիւնը։

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ — ՎԱՐԶԱԿԱՆ

ԾԱՌԱՅՆԱԿՈՂՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՑ։

ՆԻՍՏ Զ։

(Շարունակութիւն) *

Հեկտեմբերի 24. 1893 թ. Յայտնել լեռնական տեսուչներին, որ այսուհետև լինամականներ կարելի է նշանակել այնպիսի անձերին, որոնք յանձն կառնեն նուիրապէս ապահովել մի որ և է եկ.-ծխական գպրոց, ուստի լինամականներ առաջարկելիս ինկատի ունենալ այս հանգամանքը։

*) Տե՛ս. նախընթաց համարը։

ՆԻՍՏ Ը։

Դեկտեմբերի 31.

Հ. Նախագահն արծարծեց և պաշտպանեց ուսուցչական—հնայոդական դրամարկղի Տարցը և առաջարկեց Յանձնաժողովին նախաձեռնող հանդիսանալ այս մեծ գաղափարի իրագործման մէջ. «Բոլորիս արդէն պարզ յայտնի է, թէ՝ ինչ նեղ վիճակի մէջ են գտնուում մեր ուսուցիչներն և թէ ինչպիսի անորոշ և անապահով ապագայ է սպասում նոցա. յաճախ պատահում է, որ նոցանից շատերը տկարութեան կամ ծերութեան պատճառով միանգամայն անկարող լինելով գործելու, ստիպուած հրաժարուում են ուսուցչական ասպարիզից և երբեմն ամբողջ ընտանիքով ընկնում են նիւթապէս ամենաանտանելի վիճակի մէջ։ Դորա միակ փրկարար միջոցն ուսուցչական հնայոդական դրամարկղի հաստատելն է, որ մի հանրօգուտ և մարդասէր գործ է։ Թէև այս խնդրի մասին բազմիցս թէ լրագրութեան և թէ այլ շրջաններում երկար գրուել և խօսուել է, սակայն մինչև այժմ իրապէս ոչ մի հետեւանքի չեն հասել։ Արդէն այս խնդիրը բոլորովին հասունացած է։

Այժմ, քանի որ Վեհափառ Հայրապետը մի առանձին պատուաբեր վստահութեամբ բարեհաճել է մեզ մասնակից անել ընդհանրապէս մեր ուսումնարանական գործերի և մասնաւորապէս ուսուցիչների վիճակի մասին խորհրդակցելուն, առաջարկում եմ՝ վերջացնել հին տարին ժամանակ պարգևող և ժամանակ կարճող Աստուածուն հաճելի մի այգպիսի մեծ և բարի գործով, որ անշուշտ այնպէս հաճելի կլինի Հայոց ազգի առաջին ուսուցիչ Վեհափառ Հայրապետին։ Յանձնաժողովի անդամներն ընդունելով Հ. Նախագահի առաջարկութիւնն իրրև սկզբունք և որոշուեցաւ, որ Յանձնաժողովի իւրաքանչիւր անդամն ուսումնասիրէ, մշակէ ուսուցչական հնայոդական դրամարկղի հարցը, յաջորդ նստերին ներկայացնէ իւր պիտոյութիւնները քննելու համար և ապա թէ վերջնական եղրակացութիւնը ներկայացնել Վեհափառ Հայրապետի բարեհայեցողութեանը։

ՆԻՍՏ Ա.

1894 թ. Յունուարի 11.

ա. Ինկատի ունենալով, որ մեր Եկ.-ծխական դպրոցների արդի կանոնադրութիւնը ունի թերի, երկդիմի և դժուարիրագործելի կէտեր, որոնց պատճառով մեր դպրոցական կեանքում յաճախ տեղի են ունենում դժգոհութիւններ, Յանձնաժողովն որոշեց. անյապաղ առաջարկել թեմական տեսուչներին և ուսուցչական խմբերին, որ նոքա ժամանակ յայտնեն իրենց դիտողութիւնները ու կարծիքները Եկ.-ծխական դպրոցների «կանոնք»-ի բոլոր յօդուածների և ծրագրերի մասին։

բ. Թեմական տեսուչներին առաջարկել, որ անմիջապէս յայտնեն իրենց դիտողութիւնները թեմական տեսչի պարտաւորութիւնների և իրաւունքների վերաբերեալ։

գ. Վրաստանի և Իմերէթի թեմական տեսչին յայտնել ի պատասխան 1893 թ. Դեկտ. 24-ին № 538 գրութեան Բ. և Դ. կէտերի. — 1) Ամենապատիւ Տ. Տեղակալի ժամանակ կատարած Հոգաբարձական ընտրութիւնները համարել օրինաւոր, եթէ կանոնաւոր ընթացքալ են կատարուած և ընտրողական թերթերն ուղարկել ի Հաստատութիւն։ 2) Թոյլ է արուում օրիորդաց դպրոցների համար Հոգաբարձուհիներ ընտրել որպէս յայտնի կդասեն ընտրողները խառը ազգաբնակութեան հետ կամ առանձին։

ՆԻՍՏ Բ.

1894 թ. Յունուարի 12.

Յանձնաժողովն որոշեց — յայտնել թեմական տեսուչներին — ա) Հոգաբարձական ընտրողական թերթերն ուղարկել Առաջնորդին, որ և կներկայացնէ Վեհափառ Կաթողիկոսին ի հաստատութիւն. բ) երբ մի նոր դպրոց է բացուում, թեմական տեսուչը պիտի անյապաղ յայտնէ կարևոր տեղեկութիւններով թէ Առաջնորդին և թէ Յանձնաժողովին։

ՆԻՍՏ Դ.

Յունուարի 25-ին.

Յովհաննէս Տէր Աբրահամեանի կազմած հետևեալ դասագրքերը յընդունուեցան մեր դպրոցների դասագրքերի թուում.

1. Պատմութիւն Հայոց.

2. Ընթերցարան բարոյական ուսմանց, ազգային գիտելեաց և զուարճալի պատմութեանց.

3. Սրբազան պատմութիւն հին և նոր կտակարանի.

4. Բանալի գիտութեան ռուս լեզուի.

5. Դեղագրութիւն հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն.

6. Աշխարհագրան.

7. Ռուսաց լեզուի դասագիրք.

Վերոյիշեալ գրքերն անյարմար դատուեցան թէ լեզուի, թէ բովանդակութեան և թէ կազմութեան ու ոճի կողմից։

Իսկ Երէնի դասագիրքն ընդունուած չլինելով ռուս դպրոցական վարչութիւններից, նոյն իսկ տիրող օրէնքի հիման վերայ, եթէ արժանաւոր էլ համարուէր, չէր կարելի ընդունել։

ՆԻՍՏ Ե.

Փետրուարի 7.

Հետևեալ անձերի անունները մուծուեցան ուսուցչաց ցանկի մէջ.

1. օր. Սոփիա Զիրչովեան . ՃՈ. կարգի.
2. Սահակ Դրիկեան . . Է. »
3. Յարութիւն Աւետիսեան . Ե. »
4. Միքայէլ Պօղոսեան . . . Ե. »
5. Մարիամ Յովսէփեան . . Ե. »
6. Աղէքսանդր Պետրոսեան . Գ. »
7. Յովհաննէս Իւզբաշեան . Գ. »
8. Ներսէս Տէր Միքայէլեան. Դ. »

2. Յանձնաժողովն այս նոտին ի միջի այլոց լսեց Շամախու Հայոց դպրոցների Հոգաբարձութեան ընտրութեան պատգամաւորների յայտարարութիւնը, որով խնդրում են Յանձնաժողովից բացատրել Ուսումնարանական կանոնադրութեան 28 րդ յօդուածի ե-րդ պարբերութիւնը. թէ արդեօք պատգամաւորներն ունի՞ն իրաւունք իրենց միջից ևս հոգաբարձու ընտրելու։

ինկատի ունենալով, որ եթէ պատգամաւորները դրկուին հոգաբարձու ընտրուելու իրաւունքից, դա կլինի միանգամայն հակառակ ընդհանրապէս ընտրողական սկզբունքին և մանաւանդ մեր արդի դպրոցական կանոնադրութեան, յանձնաժողովն որոշեց անմիջապէս գրել թէ Շամախի կոնսիստորիային և թէ ընտրուած պատգամաւորներին, որ պատգամաւորներից հոգաբարձու ընտրելն ամենևին հակառակ չէ օրէնքի ոգուն. այլ ընդհակառակը՝ հասարակութիւնից ընտրուելով պատգամաւորներ, իսկապէս հոգաբարձութեան աւելի հաւանական և վըստահելի թեկնածուներ են դառնում: ուստի և պիտի տալ նոցա կատարեալ իրաւունք իրենց միջից կամ դրսից (միայն ծխականներից) ընտրելու ուսումնարանների բարեկարգութեան և յառաջադիմութեան համար արժանաւոր հոգաբարձուներ:

3. յայտնել թեմական տեսուչներին, որ իրենց թեմի եկ.-ծխական դպրոցների ուսուցիչներին և ուսուցչուհիներին յորդորեն, որպէս զի նոքա անշուշտ պատրաստուեն վարկ (ցենզ) ձեռք բերելու համար. մանաւանդ որ մեր երկու հաստատութիւնները՝ կովկասեան բարեգործական և բագուայ մարգասիրական ընկերութիւնները օգնում են այդպիսիներին:

ՆԻՍՏ Զ.

փետրուարի 14-ին.

բաղքներից երևում է, որ մեր ուսումնարաններում ուսուցիչների և հոգաբարձուների միջև յաճախ գժգոհութիւններ և տարաձայնութիւններ են ծագում այն հարցի առթիւ՝ թէ արդեօք մի որ և է հանգուցեալի յիշատակը յարգելու համար ուսումնարանի աշակերտներին կամ աշակերտուհիներին եկեղեցի տանելը կախուած է միայն ուսուցչական ժողովից թէ հոգաբարձականից. քանի որ այդ հարցի մասին մինչև այժմ ոչ մի կարգադրութիւն եղած չէ, որոշուեցաւ յայտնել թեմական տեսուչներին, որ այսուհետև այդպիսի դէպքերում անպատճառ ուսուցչական և հոգաբարձական խառն ժողովով ձայների պարզ աւելութեամբ պիտի կայացնել վճիռ, թէ արդեօք ինչպիսի հանգամանքներում և ինչ ձևով պիտի պատուել ուսումնարանի կողմից հանգուցեալի յիշատակը. դպրոցի կողմից սա մի մեծ պատիւ է, որ կարելի է տալ մի հանգուցեալի յիշատակին, ուստի և խառն ժողովն ինկատի առնելով այս, պիտի աշխատէ ա) միայն արդարև արժանաւորներին տալ այս յարգանքը և բ) յաճախ չդրկել աշակերտներին դասերից, այլ միայն բոլորովին բացառիկ դէպքերում:

ՆԻՍՏ Ը.

փետրուարի 28.

ընդունուեցաւ ուսուցչուհիների թեում.

1. Օր. վառվառէ Լազարեան Դ. կարգի. Ուղարկել օր. փեփրոնէ Հայաճեանի ուսման վկայականը Բեսարաբիայի վիճակային կոնսիստորիային, որպէս զի յանձնէ իրեն:

ՆԻՍՏ Թ.

մարտի 5.

Ուսուցչաց ցանկի մէջ մտաճուեցան.

1. Սիմէօն Գրիկեան . . է. կարգի
2. Սահակ Տէր Պօղոսեան . Գ. »
3. Գրիգոր Տէր Պօղոսեան . Բ. »
4. Վահան Նիկողոսեան . . Գ. »
5. Վարդան Տէր Վարդանեան Գ. »

Օր. եղիսաբէթ Տէր Աւագեանին վերադարձնել իւր ուսման վկայականը:

ՆԻՍՏ ԺԲ.

մարտի 25-ին.

Վեհափառ կաթուղիկոսի հրամանով գրել երևանի, Ալեքսանդրապոլի և Շամախու թեմական տեսուչներին, որպէս զի Կ. բարեգործական ընկերութեան խորհրդին անյապաղ հայտնեն խնդրած վիճակագրական տեղեկութիւնները:

Յ ա յ տ ա ր ա ր ո ւ թ ի ւ ն ն ե ր.

Ա Զ Գ·

ՏՊԱՐԱՊՆԻ ՏԵՍՉՈՒԹԻՒՆԸ խնդրում է այն բոլոր վճռական Ընտաններից և գործակալներից, որոնք ցարդ չեն ուղարկել ներկայ թուականի «Ըրարատի» բաժանորդաց ցուցակը, բարեհաճեն շուտափոյթ ուղարկել։

«ԱՐԱՐԱՏ»Ի ԱՐՁ· ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻՆ

Յիշեցնում ենք, որ «Ըրարատ»ը սահմանուն պէս իսկոյն և եթ հասցնելն բաժանորդներին, ուրեմն յաճախ պահանջներ են գալիս։ Յոյս ունենք, որ այսուհետև այդպիսի դանգատութիւններ չեն կրկնուիլ։

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱՒ

ՉԵՌԱՑ ՄԱՇՏՈՑ

Երկրորդ տպագրութիւն։

ԳԻՆՆ Է 2 ՌՈՒԲԼԻ

Կարելի է դիմել և Տպարանին այս հասցեով.
Типографія Эчміадзинскаго Монаст.

Ա· ՏԵՐ ՄԻՔԱԵԼԵԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Արտատպած «Ըրարատ»ից)

Ս· ԷՋՄԻԱԾԻՆ

1893

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊԵԿ

Այն անձանց, որոնք յաճախակի դիմում են ինձ հարցնելու թէ իմ «ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՕՆԻ» ա· բ· և դ· տարիների համար կազմած կրօնի դասագրքերը թոյլատրուած են արդեօք հոգևոր իշխանութիւնից· պարտք եմ համարում յայտնելու, որ ի 28 փետրուարի 1894 ամի № 262, ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆԸ բարեհաճել է հրամայելու վերոյիշեալ գրքերը մուծանելու ի շարս այն դասագրքերի, որոնք գործ են ածուում մեր եկեղեցական դպրոցներում։

Մխաքան Մաղնաղ՝ ՍԱՀԱԿ ՔԱՀ· ՍԱՀԱԿԵԱՆՑ·

3—3

Կայ են տեսել փ· Վարդանեանի հրատարակութիւնը

			Ր.	կ.
1·	ՇԱՐԻԴ·	Ֆրանկլին· 2· տիպ· տակաւաքիւ·	—	40
2·	———	Վաշինգտոն· 2 տիպ·	—	60
3·	———	Հոմերի Իլիականը· պատկերներով·	1	—
4·	———	Հոմերի Ոդիսականը·	1	20
5·	———	Ռէյնեկէ աղուէսը	—	60
6·	ՍՄԱՅԼՍ·	Ինաւորութիւն	1	50
7·	———	Ինքնօգնութիւն	1	50
8·	ԱՄԻՉԻՍ·	Սիրտ	1	—
9	———	Ալէքսինեներից մինչեւ Ենդիրը	—	20
10·	ՌՈՒՍՏԵՄ	եւ Զոհրաբ·	—	20
11·	ՇԻԼԼԷՐ·	Ազատակներ· ողբերգութիւն	—	50
12·	ՏՕԼՍՏՕՑ·	Ռոբինզոն· փոքր· համար	—	20
13·	———	Կոլումբ· փոքրերի համար	—	15
14·	ՀԱՑՋԷ·	Բէաթրիչէ· վէպիկ	—	30
15·	———	Նօնցոյի քերդը· վէպիկ	—	30
16·	ՎԱԼԴՆԷՐ·	Հաւատարիմ Սալիտրին *)	—	10
17·	ԻՐՎԻՆԳ·	Մահմեդի կեանքը	1	20

Շ ո ր վ ե լ ի պ ո ւ ն ի՝

2· ԴԻԿԿԷՆՍ· Դաւիթ Կոպպերֆիլդ· երկու հատոր· ռուսերէնից·

Վաճառվում են թարգմանչի մօտ՝ Тифлисъ Садовая, Марінко-Ананьевское училище, եւ կենգրոնական գրավաճառանոցում·

*) Ցպագրու· Հրատար· Ընկեր·

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԻ

ՆՈՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՊԱՊԻԿ ԵՒ ԹՈՔՆԱԿ

ԳԻՐՔԸ

ԳԻՆՆ Է 60 [illegible]

Յանձնարարեալ [illegible] Մ[illegible] Տպատեանական վարչութեան։

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ՆՈՐԻՆ ՎԻԵՆԱ Մ'ԻՒՍ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՆԱԵ ԵՒ

Ի

ՄԱՐԳԱՐԻՏ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ԵՐԿՆԻՑ

ՑԻՍՈՒԻՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐՈՏ ԴԱՍԵՐ

ԳՐԵԱՑ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Ի ՊԷՏՍ

Հոգևոր կրթութեան եկեղեցւոյ որդւոց և դպրոցի մանկանց.

Դ· ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ·

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊԵԿ·

Ի

ՑԻՍՈՒԻՍԻ ՎԵՐՋԻՆ ՇԱԲԱԹ

ԿԱՄ ՀԻՆ ԱՇԽԱՐՀ

ԵՒ

ԿԱՐՈՒՄԵԼՈՑ ՅԻՇԱՐՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵԳՐԵԱՑ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Ի ՆՈՒԷՐ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՈՒԽՏԻՆ

Դ· ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Գինն է 30 կոպէկ

Կան և միասին կազմած· գինն է 60 կոպէկ·

Դիմել Տպարանական վարչութեան է Ս· Էջմիածին·

Պատմարով առնողներին զիջումն կ՚ընէ։